# Ազգ
Azg

30 ՅՈՒԼԻՍ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 130(5213)

ISSN: 1829-1651


## Նազարբաեւը՝ Պուտին-Ալիեւ հանդիպման միջնո՞րդ

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Դիվանագիտական աղբյուրներից virtualaz.org-ին, որի հիմնադիր-գլխավոր խմբագրին ադրբեջանական ընդդիմադիր մամուլը կնքել է «լրտեսական դաշտում Իլհամ Ալիեւ աշխատակազմի ներդրած», հայտնի է դարձել, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը «Բաքվում կլինի օգոստոսի կեսերին»:

Ո՛չ Կրեմլի, ո՛չ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի աղբյուրները դա դեռեւս չեն հաստատել, բայց չեն էլ հերքել: Միաժամանակ նույն լրատվամիջոցին «հայտնի է դարձել, որ Պուտինի հետ Բաքվում կլինի նաեւ Ղազախստանի նախագահ Նազարբաեւը»: Ավելի վաղ ադրբեջանական աղբյուրները Նազարբաեւի Բաքու ուղեւորվելու մտադրության մասին գրել էին, բայց՝ ակնհայտ վերապահումներով:

Երեկ, մինչդեռ, նշվել է հստակ ժամկետ՝ օգոստոսի 15-ը, որն իրոք «համընկնում է Պուտինի Բաքվում գտնվելու օրվան», եթե, իհարկե, վերջնականապես հաստատվի, որ ՌԴ նախագահը մեկնելու է Ադրբեջան, այն էլ հստակ՝ «եկող ամսվա կեսին»:

Տես էջ 8

## Ուղեվարձի թանկացման դեմ բողոքի գործողության հանրային ռեսուրսը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Անկախ նրանից, թե ինչ գործոններ պայմանավորեցին ուղեվարձի թանկացման դեմ բողոքի շարժումը, ուղեվարձի թանկացման կասեցման որոշումը նշանակում է ընդհանրապես հանրային կարծիքի թեկուզ ժամանակավոր հաղթանակ, ընթացքի շրջում, ամեն ինչ տեսած եւ անտարբեր դարձած հասարակության գոնե ինչ-որ մի շերտի արթնացում: Իսկ երիտասարդ ակտիվիստների շարունակվող պահանջատիրությունը նշանակում է, որ հանրային կարծիքը շրջանցելու անզուսպ ցանկություն ունեցողները ստիպված են այսուհետեւ զսպել իրենց այդ կարգի ցանկությունները, հավաքել իրենց, քանի որ նրանք արդեն ոչ միայն վարկանիշ կկորցնեն, այլեւ նյութական ռեսուրս՝ շահույթի կորստի ձեւով: Իհարկե, դաշտը, մարդկանց, շարժառիթներն ու գեներացնողներին մեկառմեկ շատ լավ ճանաչելով եւ տարիներով հանրային կյանքի տարբեր դրսեւորումներին հետեւելով՝ չեմ կարող միամիտ ձեւանալ ու որոշ մարդկանց նման պնդել, թե բողոքի ակտիվությունն ուղղորդողներ չկային, քանի որ անգամ ՀՀԿ-ի ներսի թեւերի ուղղորդումները միմյանց դեմ եթե միայն դիտարկենք, որոնք անզեն աչքով էլ տեսանելի էին, մնացած քաղաքական ուժերի անզուսպ խառնվելը գործընթացներին բացահայտելը պարզապես տեխնիկայի խնդիր կդառնա: Սակայն նույնիսկ այդ ուղղորդողները գլխի չեն ընկել, թե որքան պայմանական էին իրենց գործողությունները, քանի որ չեն կարողացել կանխատեսել՝ որքա՞ն անկախ եւ ինքնաբավ կարող են դառնալ իրենց առջեւ մի խնդրի դեմ պայքարելու խնդիր դրածները: Այնպես որ մեր նկատած ուղղորդումներն այս իմաստով ի վերջո կարող էին տասներորդական նշանակություն ունենալ, քանի որ առավել կարեւոր էր, որ երիտասարդ մարդիկ չէին վախենում բողոքի ձայնը բարձրացնել, մինչդեռ թվում էր, թե տարբեր կարգի ընտրությունները անհույս քնեցրել են մարդկանց մեջ եղած համարձակությունն ու ինքնասիրությունը:

Եվ ուրեմն՝ հիմա արդեն իշխանության համար դժվարանալու է ամեն ոչ պոպուլյար որոշման կայացում, ինչն առաջներում կարծես թե դժվարություն չէր ներկայացնում:

Տես էջ 3

## Հրաչյա Հարությունյանի փաստաբանը հանդիպել է օմբուդսմենին



Փաստաբան Ռուբեն Մարգարյանը (նկարում՝ աջից), որն իրականացնում է Մոսկվայում տեղի ունեցած ավտովթարից հետո մեղադրվող Հրաչյա Հարությունյանի պաշտպանությունը, Երեւանում հանդիպել է մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանին:

Փաստաբանի փոխանցմամբ՝ Հրաչյա Հարությունյանը դուրս է գալիս շոկից, բայց դեռեւս բժիշկների հսկողության տակ է եւ ստանում է անհրաժեշտ բուժօգնություն:

Ինչ վերաբերում է կասկածյալին դատարանի դահլիճ կանացի հագուստով տանելուն, փաստաբանը վստահ է, որ պատկան մարմինները կտան իրենց գնահատականն այդ փաստին՝ եւ մարդու իրավունքների նման խախտումն անհետեւանք չի մնա: «Իսկ ես՝ որպես Հրաչյա Հարությունյանի փաստաբան-պաշտպան եւ որպես ՌԴ արդարադատության նախարարությանը կից գործող Հասարակական խորհրդի անդամ, մտադիր չեմ անուշադրության մատնել այս հարցը եւ վերաբերվել դրան որպես քիչ կարեւորություն ունեցող հանգամանքի: Ավելին՝ պատրաստվում ենք այն հասցնել տրամաբանական ավարտի», ասել է Ռուբեն Մարգարյանը:

Ի. Պ.

## Իսրայել-Պաղեստին բանակցությունները վերսկսվում են

**Վերջին երեք տարիներին ընդհատված իսրայելա-պաղեստինյան հաշտության բանակցությունները վերսկսվում են այսօր՝ հուլիսի 30-ին:**

**Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի օգնական Նաբիլ Աբու Ռուդայնեհը Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել է, որ Աբբասը Վաշինգտոնում բանակցություն սկսելու պաշտոնական հրավերը ստացել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիից, որի նախաձեռնությամբ էլ անցկացվում է հանդիպումը:**

**Ռուդայնեի խոսքերով, բանակցությունների առաջին օրերին կմշակվի կողմերի հետագա գործողությունների ծրագիրը:**

**ԱՄՆ պետդեպարտամենտում Ֆրանս-պրեսին տված հարցազրույցում հաստատել են, որ պաշտոնական հրավեր է ստացել ինչպես Մահմուդ Աբբասը, այնպես էլ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն: Նաեւ հաղորդվում է, որ Պաղեստինի հետ բանակցությունները վերսկսելու նախօրեին Իսրայելը բանտերից ազատ է արձակել 104 պաղեստինցի կալանավորների: Պաղեստինյան կողմը ողջունել է իսրայելցիների որոշումը եւ բանակցությունների ընձեռած հնարավորություններից օգտվելու մտադրություն է արտահայտել: Ավելի վաղ Իսրայելի կառավարությունն ընդունել էր օրենք, ըստ որի Պաղեստինին տարածքային զիջումներ ենթադրող ամեն մի համաձայնագիր պետք է դրվի հանրաքվեի: Պաղեստինյան ինքնավարությունը իր հերթին որոշել է հանրաքվեի դնել Իսրայելի հետ ստորագրվելիք ամեն մի համաձայնագիր:**

## «Զվարթնոց»-ից մեկնողների թիվը նվազել է

«Զվարթնոց» օդանավակայանից մեկնողների թիվը հունվար-հունիս ամիսներին նվազել է: Այդ մասին հաղորդում է «Արմենպրեսը»՝ վկայակոչելով ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչությունից ստացված ցուցանիշները: Համաձայն դրանց՝ 2013-ի առաջին 6 ամիսներին Հայաստանից մեկնել է 363 հազար 009 մարդ, իսկ 2012-ին՝ 384 հազար 037 մարդ: Նույն ժամանակահատվածում Հայաստան է ժամանել 330 հազար 484 ուղեւոր, իսկ նախորդ տարի՝ 333 հազար 962 մարդ: Օդային ճանապարհով Հայաստանից մեկնողների եւ ժամանողների ընդհանուր թիվը 2013 թ. հունվար-հունիսին կազմում է 693 հազար 493, որը զիջում է նախորդ տարվա տվյալներին՝ 717 հազար 999 մարդ:

**100-ԱՄՅԱԿ**

## Նելսոնը զոհվեց՝ մոր անունը շուրթերին

**Ընթացիկ տարվա մարտի 28-ին լրացավ հարյուր տարին փառաբանված հայ օդաչու, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի ծննդյան օրվանից: Կառավարական կազմկոմիտեն, որն անձամբ ղեկավարում է Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, հոբելյանական ծավալուն ծրագրի շրջանակներում հանրապետությունում անցկացրել է բազմաթիվ միջոցառումներ: Հոբելյանի ավարտական գործողությունը կլինի արդեն ավանդական դարձած Նելսոն Ստեփանյանի անվան սամբոյի միջազգային պատանեկան մրցաշարը, որին կմասնակցեն մարզիկներ Ռուսաստանի մի քանի մարզերից, Վրաստանից, Լիտվայից, Հունաստանից, Ռումինիայից, Արցախից:**

**Մրցաշարը կանցկացվի 2013 թվականի օգոստոսի 2-4-ին Երեւանի «Աշխատանք» մարզապալատում (ք. Երեւան, Ցախի փ. 18) :**

**Ստորեւ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի պատվավոր նախագահի, սպորտի վաստակավոր վարպետ Զորի Բալայանի ակնարկը հայ լեգենդար ասի հերոսական սխրանքների մասին:**

***

Իսկ 1990 թվականի աշնանը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի նիստի ժամանակ ես ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Տ. Յազովին հանձնեցի պատգամավորական հարցում, որտեղ պատմում էի, որ ժամանակակից բարբարոսները Կիրովաբադում ավերել եւ պղծել էին Խորհրդային Միության կրկնակի հերոս մարշալ Բաղրամյանի հուշարձանը եւ Խորհրդային Միության կրկնակի հերոս, օդաչու Ստեփանյանի հուշարձանը



Շուշիում, եւ խնդրանք ներկայացրեցի՝ համապատասխան քայլեր ձեռնարկել: Պաշտպանության նախարարը զբաղվեց այդ հարցով: Սակայն ոչ մի կոնկրետ բան չարվեց: Եվ միայն մեկուկես տարի անց քայլեր ձեռնարկեցին իրենք՝ ղարաբաղցիները, որոնք ազատագրեցին Շուշին: Եվ 1992 թվականի մայիսի 9-ին, առավոտյան ժամը վեցին ինձ բախտ վիճակվեց նորից կանգնել այն նույն տեղում, որտեղ քառասունհինգ տարի առաջ հավաքվել էինք հասակակիցների խմբով: Հուշարձանի տեղում բարբարոսները բետոնե մի ինչ-որ սյուն էին տեղադրել: Օդում խանձրահոտ էր կանգնած, անդադար հնչում էին ճայթյուններ եւ ինքնաձիգների կրակահերթեր, շուրջը այրվում էին տները: Բայց ես չէի թաքցնում իմ երջանկությունը, գիտակցելով, որ Նելսոնի հետ հանդիպումը այնուամենայնիվ կայացավ: Երկար էի քայլել դեպի այդ սրբազան վայրը: Եվ հասա:

Տես էջ 4

# ԼՂՀ վարչապետ. «Ստատուս քվոն կպահպանվի տասնյակ տարիներ»

«Ստեփանակերտի օդանավակայանը ոչ միայն կնպաստի տնտեսական հումանիտար ծրագրի իրականացմանը, այլեւ մեր քաղաքացիների իրավունքն է՝ ունենալ օդանավակայան եւ օգտվել տրանսպորտից: Օդանավակայանը կխթանի զբոսաշրջության զարգացումը: Այցելություններն էլ տնտեսական ծրագրերի իրականացման հիմք կհանդիսանան, քանի որ այցելելով ու վստահելով Արցախին՝ զբոսաշրջիկները



կցանկանան հետագայում նաեւ ներդրումներ կատարել»: Տեսակետը ԼՂՀ վարչապետ **Արա Հարությունյանինն** է՝ ի պատասխան «**Ազգ**»-ի հարցի, թե Ստեփանակերտի օդանավակայանը տնտեսական առումով ինչ օգուտներ կտա Ղարաբաղին: «**Ազգ**»-ի հաջորդ հարցին, թե ինչն է պատճառը, որ շինարարությունից հետո էլ Ստեփանակերտում եւ Շուշիում ծորակից կրկին ժանգոտած ջուր է հոսում, վարչապետն ասաց, որ ջրի համակարգի բարելավման համար տասնութ միլիարդի շինարարական աշխատանքներ են կատարվել: Մայրաքաղաքում կառուցվել է նոր քաղաքային ցանց, որը, սակայն, ամբողջությամբ չի ապահովում քաղաքի տարածքը:

«Շուշիում մի մասն օգտվում է հին խողովակաշարից, որի ֆիլտրակայանը դեռ չի վերանորոգվել, եւ կարող են առաջանալ խնդիրներ քաղաքի այդ թաղամասերում: Ստեփանակերտի վերաբերյալ կարող եմ ասել, որ իննսուն տոկոսով ավարտվել են ներքին ցանցի կառուցման աշխատանքները: Հին ցանցն անկառավարելի էր: Ջրընդունիչներ ու ֆիլտրակայաններ են կառուցվել», ասաց վարչապետը՝ հավելելով, որ վարարումների ժամանակ մեխանիկական ֆիլտրացման հետ կապված խնդիրներ են առաջանում, սակայն դա ջրի որակի վրա շատ քիչ ազդեցություն է թողնում

Անձամբ վարչապետը շատ գոհ է այսօրվա ջրի մատակարարման որակից: Հիշում է՝ տարիներ առաջ ջուրը դույլերով էին կրում, հիմա շուրջօրյա ջրամատակարարում ունեն: Կառավարությունը որոշել է, որ մինչեւ 2018 թվականը հանրապետության եւս 200 բնակավայրերում կլուծեն ջրի խնդիրը:

Թեպետ հատուկ ծրագիր սիրիահայերի բնակեցման համար չկա, սակայն Ղարաբաղում ուրախ են, որ սիրիահայերը գործունեություն են ծավալում իրենց երկրում: Վարչապետի գնահատմամբ՝ փորձված հողագործներ են ու նոր մշակույթ են մտցրել հողագործության մեջ: «Միջոցներ ունեցող սիրիահայերը բնակարան են ձեռք բերել ու լուրջ ներդրումներ են կատարում: Նոր մշակաբույսեր են բերում Արցախ, ձիթենի են աճեցնում», ուրախությամբ փաստում է Հարությունյանը:

Այն, ինչ Երեւանում կարելի է արդեն համարել անցած փուլ, Ստեփանակերտում կսկսվի հաջորդ տարի: Գազի եւ էլեկտրաէներգիայի գների սակագնի բարձրացումից Արցախում հացը թանկացել է 10 դրամով: Ամենայն հավանականությամբ մյուս տարի Ստեփանակերտում կթանկանա նաեւ տրանսպորտը: Ներկայիս 70 դրամի փոխարեն ստեփանակերտցին կվճարի 100 դրամ: «Տրանսպորտային ընկերությունները վաղուց պայքարում են տրանսպորտի գնի բարձրացման համար: Նրանք աշխատում են վնասով, եւ արդեն տեւական ժամանակ վնասը փակում է կառավարությունը: Վնասի պատճառով գյուղերից դեպի Ստեփանակերտ եկող երթուղային տաքսիները չեն գործում: Տրանսպորտ չկա, ընկերությունները հրաժարվում են փոխադրումներ կատարելուց, իսկ բնակիչները բողոքում են», հայտարարեց վարչապետը՝ կրկին շեշտելով, որ Ստեփանակերտում տրանսպորտի գնի թանկացումն անխուսափելի է:

Կառավարությունում որոշել են փոխհատուցել տրանսպորտային ընկերությունների վնասները մինչեւ հունվարի մեկը. «Հունվարի մեկից կառավարությունը կբարձրացնի քաղաքացիների թոշակն ու աշխատավարձը, միայն այդ ժամանակ տրանսպորտի սակագինը կբարձրանա»:

Անդրադառնալով Ադրբեջանի սպառազինությանը՝ վարչապետը չկարեւորեց, թե Ադրբեջանը որտեղից եւ որ երկրից է զենք գնում:

«Սակայն ցավալի է, որ Հայաստանին բարեկամ գործընկերը, որ նաեւ համանախագահող երկիր է, թույլ է տվել նման բան: Բայց ես գնահատական չեմ տալիս: Եթե Ռուսաստանից չգնի, այլ երկրից կգնի: Մենք պետք է դրան դիմակայելու համար քայլեր ձեռնարկենք: Աշխատանք կատարում ենք, եւ այսօր տարածաշրջանում խաղաղությունը կպահպանվի շնորհիվ մեր պաշտպանության բանակի: Հավաստիացնում եմ՝ մեր անվտանգությունն ապահովված է», ասաց վարչապետը՝ հավելելով, որ ԼՂ հակամարտության կարգավորման բանակցությունները երկար կշարունակվեն: «Ադրբեջանի հետ բանակցելն անիմաստ է, ո՞ւմ հետ բանակցենք: Կարծում եմ, ստատուս քվոն կպահպանվի տասնյակ տարիներ, քանի որ մեր դիմաց նստած պետությունն ընդունակ չէ բանակցելու: Դրա համար պետք է Արցախը զարգացնենք, ավելի մեծ տեմպերով»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ, ԼՂՀ

ԳՈՒՅԺ

# Կյանքից հեռացավ Էդուարդ Էլբակյանը



**Կյանքից հեռացավ ճանաչված խմբավար, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Էդուարդ Մեխակի Էլբակյանը: Նա իր ողջ գիտակից կյանքը նվիրեց հայ երգարվեստի զարգացմանը: Նրա ղեկավարած երգչախմբերը հասան մեծ բարձունքների ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:**

**Իսկ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում նրա գործունեության 40-ից ավելի տարիների ընթացքում կրթվեցին եւ դաստիարակվեցին բազմաթիվ սերունդներ: Կատարողական եւ մանկավարժական բնագավառներում նրա ավանդը բարձր է գնահատել ՀՀ կառավարությունը:**

**1985թ.-ին նրան շնորհվել է վաստակավոր արտիստի պատվավոր կոչում, 2003-ին արժանացել է ՀՀ նախագահի շնորհակալագրի, իսկ 2012թ.-ին՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրի:**

**Էդուարդ Էլբակյանի վառ հիշատակը հավերժ կմնա նրա ընկերների եւ ուսանողների սրտերում:**

**Էդուարդ Էլբակյանի հուղարկավորությունը տեղի կունենա հուլիսի 30-ին, ժամը 13-ին, Կոնդի Սբ Հովհաննես եկեղեցուց:**

*Խաչատուր Աբովյանի անվան*
*հայկական պետական*
*մանկավարժական համալսարան*

# «Պատրաստված է Հայաստանում» առաջին մասնագիտացված խանութը Երեւանում

**Ինչպես տեղեկացանք Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միությունից, երեկ Երեւանում ՀԱԳՄ թեթեւ արդյունաբերության ճյուղային միությունը բացեց Հայաստանում թեթեւ արդյունաբերական արտադրանքի «Պատրաստված է Հայաստանում» առաջին մասնագիտացված խանութը: Այստեղ վաճառվում են միայն Հայաստանի Հանրապետությունում արտադրվող բարձրորակ հագուստ, կոշիկ, գուլպեղեն եւ այլն: Այն գտնվում է Տիգրան Մեծի 20 հասցեում՝ «Տաշիր» հանրախանութի դիմաց եւ «Սիլաչի» հյուրանոցի հարեւանությամբ: Այստեղ վաճառվում են հայկական «ՏՈՍՊ», «ԼՅՈՒՔՍ», «ԼԻԴԱ», «ՄԵԼԱՆՏԵ» եւ «ԱՐՏՍՈՒՔՍ» ընկերությունների արտադրանքը: Հավանական է, որ նմանատիպ սրահներ կբացվեն նաեւ հանրապետության այլ բնակավայրերում:**

**«Հետաքրքրությունը մեծ է, գնորդներին բացատրելու հարկ չի լինում: Նրանք հրաշալի տարբերում են մեր վարպետների պատրաստած բարձրորակ արտադրանքը հասկապես Թուրքիայից եւ Չինաստանից կիլոգրամներով ներկրվող էժանագին, բայց շուտ շարքից դուրս եկող ապրանքներից: Այս արտադրանքը գնելով մենք զորակցում ենք հայրենական արտադրողին, նպաստում նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ դրան առնչվող բոլոր դրական հետեւանքներով», ասված է Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության հաղորդագրության մեջ:**

Ա. Մ.

# Ամառային ճամբար Դիլիջանի դպրոցում

**Դիլիջանի միջազգային դպրոցը հուլիսի 14-28-ը իր ամառային ճամբարում հյուրընկալել էր 30 երեխաների 13 երկրներից, նրանց մեջ կային նաեւ երեխաներ Սփյուռքից:**

**Ամառային ճամբարի ընթացքում երեխաները զբաղվել են սոցիալական ու բնապահպանական խնդիրների ուսումնասիրությամբ, իսկ արդյունքները ներկայացրել են հուլիսի 27-ին՝ փակման երեկոյի ժամանակ: Երեկոն շարունակվել է ազգային երգերով, պարերով, որոնք ներկայացրել են հենց ճամբարի մասնակիցները:**

**Ամառային ճամբարի կազմակերպման բոլոր ծախսերը հոգացել էր Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնադիրներ Վերոնիկա Զոնաբենդի եւ Ռուբեն Վարդանյանի RVVZ հիմնադրամը: Հիշեցնենք, որ Դիլիջանի միջազգային դպրոցի դռները կբացվեն 2014-ի սեպտեմբերին:**

Ի. Պ.

# Հայաստանի կապի ծառայության որակի խոսուն մի փաստ

## *Օքսֆորդից Երեւան՝ 4 օր, Երեւանից... Երեւան՝ 13 օր*

Հոգեբանորեն երբ ընտելացնում են մարդուն ամեն բանի, հատկապես վատին, նա սկսում է կորցնել զարմանալու, ընդդիմանալու, փոփոխության ձգտումի եւ այլ նման կարեւոր զգացումները, դառնում է ձանձրալի համակերպվող, այսինքն՝ ամենավտանգավորը՝ անտարբեր-համակերպվող, որի հետեւանքները՝ ամենավատ առումով, հայտնի են որեւէ հասարակությանը:

Երբ անվանի գիտնականը չէր կարողանում պատկերացնել, թե ինչպես է հնարավոր հանրային կապի ծառայության եւ սպասարկման այնպիսի որակ եւ մակարդակ, ինչն այսօր առկա է եւ մատուցվում է մեր քաղաքացիներին, մի պահ վարանեցի («Մի՞թե ամեն ապարեզում նույնը չէ»,- մտածեցի): Խոսքը բրիտանական գիտական կենտրոններից մեկի հետ կարեւոր համագործակցությանը վերաբերող նամակի՝ Մեծ Բրիտանիայից Հայաստան տեղ հասնելու ժամանակներին է վերաբերում: Հնարավո՞ր է այսպիսի իրողություն, որ նամակը Օքսֆորդից Երեւան տեղ հասնի 4 օրում (03.07.-07.07), իսկ Երեւանից հասցեատիրոջը հասնի 13 օրում: «Սպասարկող փոստը (թիվ 25 փոստային բաժանմունք) մեր տնից ընդամենը 100 մետր հեռավորության վրա է», տարակուսում է գիտնականը: Ուշացման հանգամանքը, որքան գիտական ծրագրի հետ կապված կարող է խնդիրներ հարուցել, նույնքան որոշակի նեգատիվ վերաբերմունք կարող է ձեւավորել հայաստանյան կապի ծառայության անպատասխանատու եւ անփույթ աշխատանքի, դրանով իսկ՝ մեր երկրի հանդեպ ընդհանրապես: Եթե տվյալ ծառայությունն իր հիմնական գործառույթը՝ փոխանցման ստույգ ժամկետները չի ապահովում, ապա էլ ինչո՞վ է զբաղված նա, եւ ո՞վ է պատասխան տալու:




Իհարկե, թե որքանով են հուզում նման երեւույթները, մեր երկրի շուրջը ձեւավորվող նման կարծիքները համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին եւ ծառայությունների պատասխանատուներին, դժվար չէ կռահել: Մենք պահ տարիներ անընդհատ կրում ենք այսպիսի աշխատանքի, անպատասխանատու վերաբերմունքի տխուր հետեւանքները՝ ցավալիորեն առանց փոփոխության դույզն-ինչ ակնկալիքի:

Մ. Ք.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

## Այլ տեսակետ

# «Պայքար», որի արդյունքում շարունակում ենք 100 դրամով ստորացված երթեւեկել

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, տեղի տալով հասարակության մի մասի ճնշումներին, որոշեց կասեցնել իր որոշումը Երեւանում հասարակական տրանսպորտի սակագնի թանկացման մասին: Այն, որ այս որոշմանը հասարակությանը չէին նախապատրաստել, հիմնավորել այն կայացնելու պատճառները, ակնհայտ էր: Ակնհայտ էր նաեւ, որ Տարոն Մարգարյանը, ի տարբերություն իր նախորդի՝ Կարեն Կարապետյանի, չուներ ոչ հասարակության հետ շփվելու, ոչ էլ իր որոշումները հիմնավորելու ունակությունները: Անգամ երեւանցիներին հղված ուղերձը նա կարդում էր, մեղմ ասած, շատ անհամոզիչ: Քաղաքապետարանի երիտասարդ կամ ոչ երիտասարդ հանրապետական պաշտոնյաներն էլ ապացուցեցին, որ իրենք կարող են պայքարել միայն տաքուկ պաշտոններ զբաղեցնելու համար եւ ոչ ավելին: Ինչեւէ: Անդրադառնամ տրանսպորտի թանկացման բուն որոշմանը որպես ուղեւոր եւ որպես տնտեսական լրագրող:

Հասարակական տրանսպորտի սակագինը 150 դրամ դարձնելով, ըստ էության, քաղաքապետարանը մեզ երկընտրանքի առջեւ է կանգնեցնում՝ ունենալ 100 դրամ սակագնով տրանսպորտ եւ շարունակել երթեւեկել իրար գլխի լցված, ժամերով սպասելով քեզ անհրաժեշտ միկրոավտոբուսին կամ ավտոբուսին, կարողանալով կամ չկարողանալով խցկվել նրա մեջ, ուշանալով աշխատանքից կամ չուշանալու համար ստիպված տաքսի վերցնելով, նոր շարժակազմ ներկրումից իսպառ հրաժարվելով, թե՞ 150 դրամ՝ առանց գերբեռնման եւ կանգառում երկար սպասելու, միկրոավտոբուսային երթուղիների մի զգալի մասը ավտոբուսայինով փոխելու, այսինքն՝ նորմալ երթեւեկելու հեռանկարով: Սա է հիմնական հարցը, մնացածը ածանցյալ հարցեր են որոնց լուծումները ցանկության դեպքում կարելի է գտնել: Հասարակության բողոքող մասը, փաստորեն, ընտրում է առաջին տարբերակը: Սակայն փաստ է, որ Երեւանի բնակչության գերակշիռ մեծամասնությունն այդ օրերին վճարում էր 150 դրամ ոչ թե նրա համար, որ ցանկանում էր ավելի շատ վճարել կամ վախենում էր ինչ-որ բանից, այլ նրա համար, որ նախընտրում էր երկրորդ՝ մարդավայել երթեւեկելու հույսը: Շտապեմ պատասխանել ինձ հետ անհամաձայնություն հայտնողների առարկություններին:

Առաջինն այն հարցադրումն է, որ թող քաղաքապետարանը 100 դրամով ապահովի քաղաքակիրթ սպասարկում: Երեւանի տրանսպորտի խայտառակ վիճակի մասին բազմիցս եմ հրապարակումներով հանդես եկել, քննադատելով ե՛ւ գործող, ե՛ւ նրան նախորդող քաղաքապետներին եւ տրանսպորտի վարչության պետերին: Նմանատիպ հրապարակումներով կամ ռեպորտաժներով հանդես են եկել նաեւ իմ գործընկերները: Սակայն փոխվում են քաղաքապետներն ու տրանսպորտի վարչության պետերը, եւ իրավիճակը չի փոխվում կամ շատ չի փոխվում: Ինչո՞ւ: Պատասխանն ակնհայտ է՝ ամեն ինչի համար պետք է վճարել համապատասխան գինը: Սա է ճշմարտությունը՝ դո՞ւր է գալիս դա մեզ, թե՞ ոչ:

Այս հարցին սերտորեն առնչվող հաջորդ հարցերն են՝ այսպես կոչված գծատերերը մինչեւ հիմա վնասո՞վ են աշխատել, եւ եթե վնասով են աշխատում, ապա ինչո՞ւ չեն հրաժարվել երթուղիներից: Բնականաբար, նրանք աշխատել են՝ նախկինում շատ ավելի մեծ, հիմա ավելի նվազ շահույթով: Հիմա ավելի նվազ, քանի որ օբյեկտիվ իրականություն է, թե 1997-ից հետո անցած 16 տարիների ընթացքում ինչպիսի գնաճ է եղել աշխարհում եւ Հայաստանում: Թե որքա՞ն է դա ազդել ավտոբուսների կամ միկրոավտոբուսների, վառելիքի եւ այլ գների, չեմ ցանկանում մանրամասնել եւ դա իրենց՝ գծատերերի խնդիրն է: Սակայն ակնհայտ է մի բան, որ ներկայումս նրանք շահույթով են աշխատում բացառապես մարդկանց իրար գլխի լցված փոխադրելով: Ինչը նրանք չեն էլ թաքցնում եւ ինչի մասին գյուտ արածի նման խոսում են քաղաքական կուսակցությունները ներկայացնող տնտեսագետները կամ ՀԿ-ների ներկայացուցիչները: Հակառակ պարագայում գծատերերը հենց այդպես էլ վարվում են՝ հրաժարվում են երթուղիներից:

Չորս երթուղի կարող եմ հիշատակել, որոնք անցնում էին իմ բնակության վայրի մոտով, եւ նրանցից երեքը՝ թ. 101, 102, 110 միկրոավտոբուսային երթուղիները փակվեցին վերջին 1-2 տարում, իսկ թ. 19 ավտոբուսային երթուղուց տնտեսվարողը հրաժարվեց, եւ այն այժմ սպասարկվում է Երեւանի քաղաքապետարանի կողմից: Վերոնշյալ երթուղիները փակվեցին, քանի որ դրանց շահագործողները չէին կարողանում գերբեռնել եւ դրանք այլեւս շահավետ չէին: Եթե շահավետ լինեին, ինչո՞ւ պետք է հրաժարվեին կամ էլ այլ տնտեսվարողներ կցանկանային սպասարկել դրանք: Թ. 19 ավտոբուսային երթուղին էլ քաղաքապետարանի համապատասխան ձեռնարկությունը եւս վատ է սպասարկում: Պատճառը նույնն է՝ 100 դրամով հնարավոր չէ շահութաբեր գործունեություն իրականացնել առանց գերբեռնելու:

Այն երթուղիները, որտեղ հնարավոր է գերբեռնել, նույն գծատերերը կշարունակեն շահույթ ստանալ դրա շնորհիվ՝ ստորացուցիչ պայմաններով մեզ տեղափոխելով: Նրանք չեն հրաժարվի դրանից մինչեւ իրենց ունեցած միկրոավտոբուսներն ու ավտոբուսները մինչեւ վերջ մաշվեն: Դրանից հետո արդեն իրենց բիզնեսը կտեղափոխեն այլ ոլորտներ: Նրանք որեւէ դեպքում չեն տուժի, կտուժենք մենք բոլորս, քանի որ այս ամենի արդյունքում ավելի է սրվելու տրանսպորտի դեֆիցիտը, ուրախություն պարգեւելով տաքսիներին՝ ավելի շատ ծախսեր պարտադրելով մեզ: Հիմա հարց՝ ավելի թանկ է արժենում, երբ ուշանում ես աշխատանքից կամ դասից, քայքայում ես առողջությունդ եւ նյարդերդ ձմռան ցրտին եւ ամռան շոգին տրանսպորտին սպասելուց կամ խցկված երթեւեկելուց, իսկ չխցկվելու դեպքում երկու տրանսպորտ փոխելուց կամ տաքսի նստելուց, թե՞ 150 դրամ վճարելով եւ նորմալ սպասարկում ստանալով:

Ես այստեղ չեմ ցանկանում խոսել տրոլեյբուսների մասին: Անզեն աչքով էլ նկատելի է, որ 50 դրամ սակագինը ուղղակի սպանում է այս ոլորտը, որտեղ, ի դեպ, չկան գծատերեր, եւ որը սպասարկվում է քաղաքապետարանի կողմից:

Ինձ կարող են առարկել, իսկ ո՞րն է երաշխիքը, որ տրանսպորտը 150 դրամ դառնալուց հետո մենք մարդավայել կերթեւեկենք: Ուրիշի փոխարեն նման երաշխիք տալ չեմ կարող եւ չեմ ցանկանում, բայց կարծում եմ, որ 150 դրամ սակագնի դեպքում դա տեղի կունենա: Ինչո՞ւ: Առաջին հերթին այն նույն պատճառով, որ այդ սակագնով արդեն շահութաբեր կլինի առանց գերբեռնելու երթեւեկելը՝ ավտոբուսով կամ միկրոավտոբուսով: Նոր սակագնի դեպքում արդեն, նրանց շահավետ կլինի ներկրել եւ շահագործել ավտոբուսներ, ինչը նրանցից պահանջելու է նաեւ Երեւանի քաղաքապետարանը: Կպահանջի՞ արդյոք դա քաղաքապետարանը: Հուսով եմ, որ կպահանջի, իսկ եթե չպահանջի, ապա ի՞նչն է խանգարում, որ մենք բոլորս պահանջենք դա, եւ ի տարբերություն ներկայիս՝ սակագինը չբարձրացնելու պահանջի, կլինենք միանգամայն իրավացի:

Բնականաբար, տրանսպորտի սակագնի բարձրացման գլխավոր խնդիրը սոցիալականն է: Ընդհանրապես թանկացումների դեմ պայքարելու փոխարեն առավել արդյունավետ եղանակը սեփական եկամուտների բարձրացման ուղղությամբ աշխատելն է, դրան ձգտելը: Սա անկախ ամեն ինչից: Իսկ տրանսպորտի այս թանկացման դեպքում բողոքը մեր պետք է լիներ այլ տեղ՝ գործատուներից պահանջել բարձրացնել եկամուտները, պետությունից՝ պետական աշխատողների աշխատավարձերն ու կենսաթոշակները եւ միայն դրանից հետո անցնել նոր սակագնի: Պետական կառույցներից եւ գծատերերից պետք էր պահանջել նաեւ անվճար կամ մասնակի վճարով երթեւեկության իրավունք խոցելի խավերի՝ կենսաթոշակառուների, երեխաների, ուսանողների համար:

Սակայն պայքարը տարվում էր ոչ թե եկամուտների ավելացման պահանջով, այլ՝ ուրիշների եկամուտների կրճատման: Մեր հասարակության մեջ, փաստորեն, այնքան խորն է նստած խորհրդային ոգին, որ անգամ այդ երկիրը չտեսած երիտասարդները վարակված են դրանով: Մեր տարեցներից ոմանք երանություն էին տալիս ստալինյան ժամանակներին, ասելով, որ նրա ժամանակ ապրանքների գների էժանացում էր լինում: Այսինքն, հիմա պայքարում ենք դրա համար, մոռանալով, թե ինչ եղավ այն երկրի հետ, որը ընտրել էր տնտեսության վարման այդ տարբերակը:

Տրանսպորտի ուղեվարձի թանկացմանն առնչվող իրադարձությունների ամբողջ ընթացքում ինձ զարմանք պատճառեցին ակնհայտ կողմնակալ լրատվությունն ու մեկնաբանությունները: Իմ գործընկերները չէի՞ն համարձակվում խորամուխ լինել տրանսպորտի թանկացման իրական պատճառների մեջ, վախենո՞ւմ էին ցուցարարների կողմից պիտակավորվելուց, թե՞ պրոֆեսիոնալիզմի պակասը դա թույլ չէր տալիս անել: Ամեն դեպքում, ցավալի էր, որ լրատվամիջոցները փորձ անգամ չարեցին ներկայացնելու մեդալի մյուս կողմը:

Ի՞նչ ունեցանք: Երիտասարդների պայքար՝ հանուն 100 դրամ սակագնով ստորացված, խցկված երթեւեկելու, առանց տրանսպորտի ոլորտի զարգացման եւ նորմալ երթեւեկություն ունենալու որեւէ հեռանկարի: Սա ի՞նչ էր՝ պայքար հանուն հետընթացի՞: Երիտասարդությունը սովորաբար պայքարում է առաջադեմ գաղափարների համար, իսկ մեզ մոտ ... «Ապրեն երեխեքը» լսում ենք այս առիթով: Միանում եմ դրան, բայց ոչ որպես գովասանքի, այլ որպես մաղթանքի: Միաժամանակ ավելացնելով՝ ապրեն երկար եւ երջանիկ, բայց մտածեն, թե ո՞ւմ, ի՞նչ նպատակի համար են պայքարում եւ ի՞նչ արդյունք են ուզում ստանալ: Հիշեցնեմ, որ շատ տարիներ առաջ եղել են այլ երիտասարդներ, որոնք իրենց վտանգելով, բնապահպանական շարժում են սկսել խորհրդային երկրում, մասնակցել առաջին ղարաբաղյան ցույցերին, հետագայում տարել արցախյան պատերազմի ողջ ծանրությունն ու զրկանքները, իսկ շատերն էլ մասնակցել մարտական գործողություններին: Պայքարի նպատակների, արդյունքների եւ տրամաբանության առումով վատ չէր լինի այս փորձին ծանոթանալը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

---

ՀԱՐՑԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ

# Ուղեվարձի թանկացման դեմ բողոքի գործողության հանրային ռեսուրսը

*1-ին էջից*

Թե հիմա ի՞նչ է նշանակում այս բոլորը՝ կարծրատիպերի կոտրո՞ւմ, անցյալի քաղաքական հիերարխիկ մոտեցումների խարխլո՞ւմ, թե՞ տնտեսական նոր բաժանումներով թելադրված հեռագնա գործընթաց՝ սա էլ ընթացքում վերլուծելու բան է, մանավանդ՝ տնտեսական լծակների տիրապետող քաղաքական շերտերը գոնե առերեւույթ շատ չեն երեւակվել: Ասել է՝ պայքարել է մի սերունդ, որը դեռ քաղաքականությամբ չի կեղտոտվել, քաղաքական ուժի ատրիբուտ հաշվենկատություն ու կորպորատիվ շահով առաջնորդվելու որակներ ձեռք չի բերել եւ դեռ նոր է անցնելու քաղաքական շահախնդրությամբ պայմանավորված որոշումներ կայացնելու հորձանուտով: Եթե, իհարկե, նոր քաղաքական ուժեր ձեւավորի եւ մոտիկ ապագայում այդ ձեւաչափով պայքարի: Իսկ առայժմ՝ պայքարող երիտասարդները կարողացել են շրջանցել քաղաքական ուղղորդումները (իսկ որ դրանք եղած կլինեն՝ չպետք է կասկածել):



Բոլոր դեպքերում պետք է ուրախանալ նոր դեմքերի երեւան գալով, անգամ պետք է ուրախանան նրանք, ում սպառնում են այդ նոր դեմքերը, որովհետեւ ծերացող ու անճկուն օրգանիզմին կարող է շարժունակություն ու դիմադրողականություն հաղորդել թարմ արյունը միայն, նոր մարդկանց գալով կփրկվի այն մեքենան, որ բոլորիս է տանում, ու որի տարբեր բաժանմունքներում նաեւ հոգնածներն են նստած: Իսկ որ արդեն աշնանը Հայաստանի դրսում եւ ներսում սպասվող գործընթացները թարմ հայացքով ու առանց կաշկանդումների դիտարկողների կարիքը կա, կարծում ենք, հասկանում են բոլորը: Քաղաքական փորձի պակասը նոր մարդկանց կստիպի խնդիրներին նայել հասարակության մեծ շերտերի շահերի տեսանկյունից, եւ ոչ թե հեղափոխությամբ անձնական խնդիրները լուծելու, ինչպես որ նրանց ծնողներն էին անում: Իսկ բազմաթիվ մարտահրավերներով աշնանը նոր հայացքն իսկապես պետք է գալու:

Միայն թե երիտասարդները պետք է կարողանան շարունակել շրջանցել ամեն տեսակի քաղաքական առեւտուր, եթե դրանք լինեն, ազատվեն բոլոր տեսակի՝ քաղաքական եւ ոչ քաղաքական ուղղորդումներից եւ կոնկրետ հարցի վերաբերյալ պայքարի թեման երբեք չքաղաքականացնեն: Ինչ ասես կարող է սպասել Հայաստանին աշնանը՝ այս կամ այն կարեւոր որոշումից հետ պահելու համար՝ պատերազմի խաղարկումից սկսած մինչեւ ամեն տեսակ դրսային եւ ներսային սադրանք:

Իմիջիայլոց՝ իշխանության շրջանում եւս հասկանում են, որ ուղեվարձի թանկացման դեմ պայքարը ընթացք է փոխել: Համենայն դեպս՝ վարչապետն էր նշել, թե պետք է հաշվի առնեն քաղաքացիական հասարակության ձեւավորման փաստը Հայաստանում որոշումները կայացնելիս: Սա արդեն քաղաքական ուժի հանրահավաք չէր, որը հեշտորեն կարող է ուղղորդվել, քանի որ պատասխանատվությունը կրում է տվյալ քաղաքական ուժի լիդերը, եւ այդ մի անձի որոշման վրա կարող է ազդել ինչ գործոն ասես: Սակայն եթե ոչ թե քաղաքական ուժն է իրադրության տերը, այլ տարբեր հիերարխիկ կապերով չհամակարգվող երիտասարդություն, նրանցից ամեն մեկի հետեւից հասնելը դժվարացնում է իշխանության գործն այն աստիճան, որ հեշտը նրանց պահանջը կատարելը կարող է լինել: Մյուս կողմից, որքան էլ տարօրինակ, իշխանությանն էլ կարող է ձեռնտու լինել ակտիվ երիտասարդություն ունենալը, քանի որ կուսակցություններից Պողոս-Պետրոս դուրս չեկավ, հիմա եթե Հայաստանի հանդեպ ինչ-որ անցանկալի գործընթաց սկսվի՝ հազիվ թե այսօր այսքան ակտիվ երիտասարդները ձեռքերը ծալած նստեն: Իսկ իշխանությունն էլ որեւէ գլոբալ հարցի դեմ ընդդիմախոսելիս կարող է մատնացույց անել երիտասարդների բողոքները՝ ասելով, որ չի կարող շրջանցել հանրության ձայնը, ինչպես որ եվրոպաներում է ընդունված: Ընդ որում՝ սա կարող է իշխանությունն անել եւ Ռուսաստանի, եւ Եվրոպայի հետ խոսելիս: Միաժամանակ՝ նույն պատճառաբանությունը նա կարող է բերել ներսում օլիգարխների ախորժակները զսպելիս: Երեւի սա նկատի ուներ Աշոտ Մանուչարյանը, երբ երեկ խոսում էր թիկունքում ժողովուրդ ունենալու մասին:

Այնպես որ զարմանալի չի լինի, եթե իշխանությունը դողա այն հանրային ռեսուրսի վրա, որը բացահայտեց ուղեվարձի թանկացման դեմ բողոքի գործողությունը:

Մնում է, որ երիտասարդ քաղաքացիականները ազատագրվեն եւ զանազան անդրիասղուկասյաններից եւ օլիգարխահոս առաջարկներից, եթե դրանք լինեն:

# Նելսոնը զոհվեց՝ մոր անունը շուրթերին

*1-ին էջից*

Դեռ Ղարաբաղյան շարժման սկսվելուց առաջ մի քանի տարի շարունակ ես աշխատում էի «Թեւեր» գրքի վրա, նվիրված պատերազմի տարիներին ամենից շատ հռչակված գրոհող օդաչուներից մեկի՝ Նելսոն Ստեփանյանի կյանքին եւ մարտական սխրանքներին: Եվ 1988 թվականին ռուսերեն ու հայերեն համատեղ հրատարակությամբ այն լույս տեսավ հերոսի յոթանասունամյակի կապակցությամբ: Նելսոնի հոբելյանը մենք համեստ նշեցինք նրա ծննդյան օրը՝ 1988 թվականի մարտի 28-ին: «Սումգայիթ»-ից ուղիղ մեկ ամիս անց:

Չկարողացանք, ինչպես հարկն է, նշել հռչակավոր շուշեցու նաեւ ութսունամյակը, գիտակցելով, որ նա չի կշտամբի սերունդներին «մոռացկոտության» համար, քանզի մեր ժամանակներում էլ անսասան են մնացել այն սկզբունքները, որոնցով հենց ինքն էր առաջնորդվում. «Պատերազմում չկա մեկ այլ խնդիր, քան կռվել. տղերքը մեզ մոտ կգան հաղթանակից հետո»: Այս բառերը վերցված են Նելսոնի հուշատետրից, որն իր գլխավոր սխրանքները գործեց արդեն այն բանից հետո, երբ երկրորդ անգամ ներկայացվել էր Խորհրդային Միության հերոսի կոչման:

Մեր ժողովուրդը որոշեց քիչ այլ կերպ պահպանել հերոսի հիշատակը: Ղարաբաղյան պատերազմի տարիներին մենք իմացանք, որ տասնյակ հրամանատարներ եւ զինվորներ կրում են «մեր շուշեցու» անունը: «Երբ մարդը մահանում է, նրա տեղը գալիս է մեկ ուրիշը, քանզի չկա ավելի կարեւոր բան, քան ժողովուրդը»: Այս բառերը պատկանում են Նելսոն Ստեփանյանին:

...Պատերազմն սկսվելուց ուղիղ քսանչորս ժամ անց հազվադեպ՝ «300000» կրծքանշանը կրող (որին արժանանում էին նրանք, ում հաջողվում էր թռչել երեք հարյուր հազար կիլոմետր) կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանին հրամանատարությունն ուղարկեց Օդեսայի ռազմաճակատ, իսկ այնտեղից շուտով՝ Բալթիկա: Եվ արդեն ճակատային առաջին իսկ ժամերից նա չիմացավ, թե ինչ է հանգիստը. «Ոչ մի օր՝ առանց թռիչքի»: Այսպես էր գրել օրագրում: Նրա հռչակը մեծանում էր օրեցօր: Քառասունմեկ թվականի դեկտեմբերին նա արդեն առաջ էր անցել բոլոր համագնդեցի ընկերներից մարտի «թվաբանության եւ հաշվապահության» հարցում: Զինակիցներից ոմանք արդեն ներկայացված էին Խորհրդային Միության հերոսի կոչման, այդ թվում եւ նրանք, ում «ցուցանիշները» շատ ավելի համեստ էին, քան Նելսոնինը: Ապագա փառաբանված օդային աս, Խորհրդային Միության կրկնակի հերոս Անտոն Անդրեեւիչ Կարասեւը 1941 թվականի դեկտեմբերին, երբ նրան ներկայացրին հերոսի կոչման, զեկույցով դիմեց հրամանատարությանը, որտեղ հասկացնել տվեց, որ «բարոյական առումով» չի կարող համաձայնել ընդունելու բարձր պարգեւը, քանի որ «գնդում կա եւս մեկ գրոհիչ օդաչու, որը բոլորին գերազանցում է վարպետության եւ խիզախության իր ցուցանիշներով»:

Եվ ահա 1941 թվականի դեկտեմբերի 29-ին «առաջին ատյանը» վերջապես լրացրեց պարգեւատրման թերթիկը, որտեղ նշված էր, որ միայն հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին անձամբ Նելսոն Ստեփանյանի կողմից «ոչնչացվել եւ շարքից դուրս են բերվել 8 տանկ, 88 ավտոմեքենա, 32 զենիթային հրանոթ, 3 զրահամեքենա, 33 զենիթային ինքնաձիգ, 10 զինասայլ, 8 սայլ, 1 շոգեքարշ, 1 զինապահեստ, 2 ցիստերն, 4 զենիթային գնդացիր, 1 մոտոցիկլետ եւ հակառակորդի մեծաքանակ կենդանի ուժ»: Եվ ապա տեքստն ավարտվում էր հետեւյալ բառերով. «Ներկայացվում է կառավարական բարձրագույն պարգեւի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման»:

Հաշված օրերի ընթացքում բոլոր ատյանների բոլոր փաստաթղթերը ձեւակերպվեցին եւ ուղարկվեցին Մոսկվա: Բայց դեռ երկար էր Նելսոնը սպասելու իր պարգեւին: Տանջալիորեն երկար: Ծառայակիցներից շատերը, որոնք պարգեւատրման էին ներկայացվել նրանից անհամեմատ ուշ, հասցրել էին ստանալ իրենց Ոսկե աստղերը, իսկ Նելսոնին ասես «ինչ-որ մեկը վերեւում» մոռացել էր: Փոխարենը՝ ինքը չէր մոռանում ցերեկային եւ նույնիսկ գիշերային մարտական թռիչքներ կատարել եւ ամեն օր հարվածել թշնամուն:

...1942 թվականի սկզբում Բալթիկ նավատորմում անձնակազմի ատեստացիա անցկացվեց: Աշխատելով «Թեւեր» գրքի վրա, ինձ հաջողվեց կարդալ այդ ժամանակվա ավելի քան հարյուր ատեստացիա: Ավելի հաճախ դրանք մեկ-երկու էջանոց էին: Իսկ Առաջին օդային էսկադրիլիայի 57-րդ ավիագնդի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանի համար կազմված ատեստացիան բաղկացած էր հինգ մեքենագիր էջից: Տվյալներ ներկայացնելով կատարված սխրանքների մասին, ատեստացիայի հեղինակները մասնավորապես նշում էին, որ Կարմիր դրոշի շքանշանակիրը «հրամանատարության կողմից եւս երեք անգամ ներկայացվել է պարգեւատրման»: Ճիշտ է, այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու «եւս երեք անգամ» ներկայացվելով այդպես էլ ոչինչ չէր ստացել: Ի դեպ, այդ մասին քառորդ դար անց Կարասեւը գրելու էր իր հուշերում. «Մենք խոսեցինք պարգեւների մասին, եւ Նելսոնն ինձ ասաց. «Անտոն Անդրեեւիչ, իմ կամքով լիներ՝ ես օդաչուների համար նախատեսված այդ բոլոր պարգեւները կուղարկեի Իլյուշինին, նրա կոնստրուկտորական բյուրոյին եւ բոլոր նրանց, ովքեր ստեղծում են մեր մարտական մեքենաները: Ինչ վերաբերում է մեզ, այստեղ միայն մեկ հաշվապահություն է պետք՝ ոչնչացնել թշնամուն գլխովին եւ վերջնականապես»:

Կյանքում որքա՜ն կողոպտված կզգայի ինձ, եթե չլիներ «մեր շուշեցուն» նվիրված գրքի վրա աշխատելու ընթացքը: Հիշում եմ, այդ օրերին քայլում էի Երեւանում եւ, նայելով հայրենակիցներիս դեմքերին, մտովի հարցնում էի, թե արդյոք գիտե՞ն, ով է Նելսոն Ստեփանյանը: Եվ ամեն անգամ մտքում ժպտում էի, նախապես իմանալով, որ նրանցից յուրաքանչյուրը կպատասխաներ. «Գիտե՛մ, իհարկե, գիտեմ: Անդրկովկասում եւ Միջին Ասիայում Խորհրդային Միության միակ կրկնակի հերոս օդաչուն: Մարտնչել է լենինգրադյան երկնքում»: Ոմանք կարող էին քիչ ավելին ասել, մյուսները՝ քիչ պակաս: Բայց դժվար թե ինչ-որ մեկն իմանար, որ Նելսոնը գրող էր, պատմաբան, տարեգիր: Նրա մահից հետո ծառայակիցներից շատերն էին գրում նրա մասին, մեջբերումներ անում նրա նամակներից, գրառումներից, ելույթներից: Պահպանված մեծ ու փոքր հուշատետրերում, օրագրերում ես գտել եմ մտքեր, որոնք այսօր թերեւս ավելի արդիական են հնչում, քան իր կենդանության օրոք: Դրանցից շատերը, վկայակոչելով այս կամ այն արխիվը, ես ներկայացրել եմ իմ գրքում: Եվ հիմա կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել այդ գրառումներից մեկի վրա. «...Տարբեր ժամանակներում մարդու երջանկությունը տարբեր է լինում: Այսօր այն կայանում է նրանում, որ հնարավորին չափ ուժգին ատենք ֆաշիզմը: Առանց այդպիսի ատելության անհնար է հաղթել թշնամուն: Եվ հիմա գիտեմ այն գլխավոր պատճառը, որի հետեւանքով անպատիժ իրագործեցին հայերի կոտորածը...Պատճառը մեկն է. մենք ավելի շատ ենք քրիստոնյա, քան ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Չափից ավելի պարզամիտ ենք ընկալել այն միտքը, որ եթե մեկ այտիդ հարվածում են, մյուսն էլ դեմ տուր:



*Ձախից Նելսոն Ստեփանյանն է՝ իր լեգենդար Իլ -2-ի առջեւ:*

Ո՛չ, հազար անգամ ոչ: Հարվածեցին այտիդ՝ ծնոտը կոտրիր: Պատերազմն այսօր ցույց է տալիս, որ մեզանից ոչ ոք այսօր չի դադարում լինել քրիստոնյաների ժառանգ, կենսագործելով այն մեծ սկզբունքը, որ արյամբ է գրված տների պատերին, օդանավի իրանին, մեզանից յուրաքանչյուրի սրտում. «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»: Միայն այսպես եւ ո՛չ այլ կերպ: Թշնամին ներխուժում է քո տուն, իսկ դու քիչ է մնում աղուհացով դիմավորես: Թշնամին սպանում է եղբորդ, իսկ դու նրան սպանելու փոխարեն՝ համաձայնում ես կլոր սեղանի շուրջը նստել նրա հետ: Թող ներեն իմ աստվածավախ պապերն իրենց աթեիստ թոռանը, բայց ես չեմ ընդունում նրանց շատ սկզբունքները, երբեմն անհասկանալի եւ խճճված բանաձեւերը: Աստված իմ, եթե որեւէ մեկն իմանա՜ր, թե ինչ անհամբեր եմ լույսը բացվելուն, երբ ինձ տանջում է անքնությունը: Իսկ անքնությունը ինձ միշտ է տանջում: Չեմ քնում, որովհետեւ լավագույն ընկերս չվերադարձավ օդանավակայան: Չեմ քնում, որովհետեւ նախորդ օրը վրիպել եմ: Իսկ դա նշանակում է, որ չեմ խփել թշնամուն, որն ինքն է խփել որեւէ այլ օդաչուի լավագույն ընկերոջը: Չեմ քնում, որովհետեւ ցանկանում եմ մտովի հաշվարկել վաղվա մարտը սկզբից մինչեւ վերջ: Ուզում եմ խեղդել, հրկիզել, պայթեցնել, սպանել: Եվ ավելի ուժգին եմ ցանկանում ատել: Մ՛խ, եթե օսմանյան թուրքի հանդեպ այդ ատելությունն ունենային իմ բոլոր եղբայրները, որոնք հենց միայն կրկնում էին. «Մի՛ սպանեք» եւ «Սիրիր մերձավորիդ»: Ո՛չ եւ ո՛չ: Երջանկությունն սկսվում է դժբախտության հանդեպ ատելությունից: Ատելությունից նրանց նկատմամբ, ովքեր դժբախտություն են սերմանում...»:

Ինչպես հայտնի է, Նելսոնը կարճ ժամանակով Երեւան էր եկել Բաքվով: Յուրաքանչյուր ժամը ծրագրված էր րոպեի ճշգրտությամբ: Լրագրերի հավաքակազմերում կարելի է գտնել բազմաթիվ նյութեր հերոսի Բաքվում գտնվելու վերաբերյալ: Երբ Նելսոնի մայրը՝ տիկին Վարդանուշը հարցրել էր որդուն, թե ինչու ուշացավ մի ամբողջ օրով, Նելսոնը պատասխանեց. «Ես Բաքվից գնացի մի գյուղ, որտեղ ապրում են իմ մարտական ընկերոջ՝ կործանիչ-օդաչու Հուսեին Բաղիրովի ծնողները: Ես չէի կարող նրանց չհանդիպել: Միայն տեսնեիր, թե որքան ուրախացավ նրա հայրը: Այդպես էր պետք, մամա»:

Պատերազմի ժամանակ քիչ չէր պատահում, որ բարձր պարգեւները բավական օպերատիվ կերպով մարտիկներին տրվեին այս կամ այն կոնկրետ հանձնարարությունը կատարելու համար: Հրամանատարությունը կապվում էր Մոսկվայի հետ, եւ առանց բյուրոկրատական քաշքշուկների պարգեւը ձեւակերպում էին, նախքան Կալինինի հրամանով հրամանագրի հրապարակվելը: Այսպես, Բալթիկյան Կարմրադրոշ նավատորմի հրամանատարը իր հրամանով «ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահության անունից ավագ լեյտենանտ Ն. Գ. Ստեփանյանին պարգեւատրում է Լենինի շքանշանով՝ մարտական հանձնարարությունների օրինակելի կատարման համար»: Գնդում շատ էին խոսում այն շքանշանի մասին: Չէ՞ որ բոլորը գիտեին, որ դեռեւս կես տարի առաջ նա ներկայացված էր հերոսի կոչման: Դա նշանակում է՝ Լենինի շքանշան եւ Ոսկե աստղ մեդալ: Իսկ այստեղ, նախորդ պարգեւը դեռ տեղ չհասած, նա հանկարծ ստանում է առանձին Լենինի շքանշան: Երկար ամիսներ անց, երբ վերջապես դուրս եկավ Կալինինի հրամանը, համագնդեցիները կատակելու էին. «Առաջինը Նելսոնի երկրորդ Լենինի շքանշանն էր, իսկ երկրորդը՝ առաջինը»: Բայց դեռ շատ ժամանակ կար մինչեւ այդ կատակը:

1942 թվականի այն մայիսյան օրերին թերթերը շատ էին գրում Նելսոնի մասին: Բերվում էին ֆանտաստիկ թվեր. «Ոչնչացրել է թշնամու ավելի քան 500 ավտոմեքենա, ավելի քան 60 տանկ եւ զրահամեքենա: Մոտ 250 զենիթային հրանոթից եւ ինքնաձիգներից զրկվեցին հիտլերականները պատերազմի ընթացքում՝ Ստեփանյանի հարվածների հետեւանքով»: «Ամեն ինչ բոլորի աչքի առաջ էր,- գրել է ավիագնդի ավագ քաղդեկ Սերաֆիմ Ստեպանովիչ Մոզգաչովը Նելսոնի սխրանքների մասին,- ես հենց մի գլուխ ատեստացիաներ էի ստորագրում, հաջորդ ատյան ուղարկելով պարգեւատրման նորանոր երաշխավորություններ»:

Շշուկները, թե Նելսոն Ստեփանյանին Կրեմլում չեն սիրում, հասան նաեւ Երեւան: Ասում էին, թե դրա պատճառը հալածյալ պատմաբան, Հայաստանի Կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար, շուշեցի Աշոտ Իոհաննիսյանի հետ Նելսոնի մոր՝ Վարդանուշ Հայրապետի Ստեփանյանի ունեցած ազգակցական կապերն էին: Բայց ինքը, ինչպես Երեւանում էին անվանում՝ Վարդանուշ մորաքույրը որդուն գրում էր, նրան դիմելով արդեն ինչպես հերոսի. «Նելսո՛ն ջան, Միության Հերոս, իմ սիրելի որդի: Ապրելու իրավունք ունի միայն նա, ով պատրաստ է ամեն ինչ զոհաբերել հանուն սիրելի հայրենիքի: Ահա նորից նստած եմ սեղանիդ մոտ եւ անթարթ աչքերով նայում եմ քո սիրելի դեմքին: Կուրծքդ արդեն զարդարված է մարտական պարգեւներով: Թանկագին որդիս, քո յուրաքանչյուր շքանշանն ու սխրանքը սիրտս լցնում են ուրախության զգացմունքով: Ոգեշնչված քո հաջողություններով, ես վերածնվել եմ, դարձել եմ նոր մարդ...Մեր երկրի եւ արեւաշատ հայրենիքի անմատչելի լեռները քեզ պարգեւել են արծվի թեւեր եւ անվախ սիրտ: Եվ ես ամուր հավատ ունեմ, որ դուք զենքը վայր չեք դնի, քանի դեռ վերջնականապես չեք ոչնչացրել հիտլերիզմը...»:

Հենց այս նամակից հետո Նելսոնն իր լեգենդար Իլ-2-ի թեւերին գրեց մոր անունը: Եվ ամեն անգամ, երբ եթերում գերմաներեն հնչում էր. «Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն: Երկնքում Նելսոնն է», ճոճում էր թեւերը, նայելով մեկ աջ, մեկ ձախ, աչքով անելով ամենահարազատ «Վարդանուշ» անվանը: Խոստովանում էր, որ հաճախ էր արտասանում մոր անունը: Այդ մասին նա պատմել էր իր եղբայր Դեմիլին, երբ գտնվում էր Երեւանում:

Նելսոնը ռազմաճակատում անցկացրած բոլոր 1266 օրերի ընթացքում չբաժանվեց «Իլյուշայից», որն այնքան էլ հարմարեցված չէր կործանիչի հետ օդային մարտի բռնվելու համար: Սակայն շուշեցին իրեն թույլ էր տալիս «խուլիգանություն» անել երկնքում, հետապնդելով գերմանական կործանիչներին եւ ռմբարկուներին: Մի անգամ, հարյուրավոր ականատեսների աչքի առաջ Նելսոնը մարտի բռնվեց գերմանական երկու ռմբակոծիչների հետ, ինչի մասին փառաբանված ծովային եւ գրող, ծովակալ Իսակովը հետագայում պատմեց հետեւյալը. «Դեպք եղավ, երբ օդում հանդիպելով երկու գերմանական ՅՈՒ-88-երի, որոնք թռչում էին ռմբակոծելու մեր զորքերի դիրքավորումները, Ստեփանյանը մարտի բռնվեց նրանց հետ (ոչ թե կործանիչով, այլ գրոհային օդանավով) եւ գնդացրային դիպուկ կրակով ոչնչացրեց հակառակորդի երկու ռմբակոծիչները»:

Ռազմաճակատային լրագրողները սիրում էին հանդիպել Նելսոնի հետ, որն ինքն էլ անթաքույց հարգանքով էր վերաբերվում նրանց եւ հաճույքով կիսում իրեն անհանգստացնող մտքերը: Իմանալով այն մասին, որ Ստեփանյանը հրամանատարության կողմից նշանակվել է փառաբանված 47-րդ գնդի հրամանատար, բոլոր թերթերից Բալթիկա նետվեցին թղթակիցները՝ նրանցից հարցազրույց վերցնելու: Հարցերից մեկին, որ վերաբերվում էր կարիերայի հանդեպ նրա վերաբերմունքին, Նելսոնը սկզբում պատասխանեց կատակով, հիշեցնելով իմաստունի խոսքերը.

«Իշխանության հասած ընկերը կորսված ընկեր է»: Եվ միայն հետո ավելի լուրջ շարադրեց իր մտքերը. «Ես զինվորական մարդ եմ: Ենթարկվում եմ ղեկավարության եւ պարտքի հրամանին: Ես հաղթանակ եմ կառուցում, եւ ոչ թե կարիերա: Այդ պատճառով էլ հրաժարվեցի գնդի հրամանատարի պաշտոնից: Բայց իմ կարծիքն անգամ չհարցրին: Նշանակեցին: Ինձ մեկ բան է մնում. անել ամեն ինչ, որ ընկերներս իմ մեջ փոփոխություններ չտեսնեն: Հիմա արդեն ինքս պետք է էսկադրիլիաների բոլոր հրամանատարներին բարեմաղթանքի խոսքեր ասեմ: Բայց բոլոր խոսքերն արդեն ասված են: Պատերազմը ձգվում է հավերժաբար, իսկ բառերն այնքան քիչ են: Դրանք արդեն հոգնեցնում են: Պետք են ոչ այնքան նոր, որքան ճիշտ ու տեղին բառեր: Պետք է ասել այն, ինչ վաղուց ասել են մեր նախնիները. «Ոչ ոք չի կարող իրեն իրոք հաղթված համարել, քանի դեռ չի կորցրել արիությունը»: Եթե վիրավոր ես, եթե մաղի են վերածել ինքնաթիռդ, բայց եթե դու դեռ թռչում ես, ապա պետք է մտածել ոչ թե մահվան, այլ կյանքի մասին: Իսկ եթե կյանքը նահանջում է, ապա պետք է մահանալով, հենց սեփական մահով սպանել եւս մեկ ոսոխի, խորտակել եւս մեկ նավ, ելնել դիմաբախման...»:

Այդ բառերը մարգարեական եղան: Անցնելու էր կես տարի, եւ «մեր շուշեցին» բառ առ բառ իրագործելու էր իր խոսքերը: Բայց առջեւում դեռ փորձություններով լի օրեր ու ամիսներ էին: Նա «երկնքում աշխատում էր» կատաղի կերպով: Լրագրողներն ավելի ու ավելի շատ նկարագրում էին նրա սխրանքները եւ ավելի քիչ վկայակոչում թվեր, որոնք հաստատում էին ասվածը: «Արդեն այնքան էլ հարմար չէ ներկայացնել Ստեփանյանի քանակական ցուցանիշները»,- իր հրապարակումներից մեկում գրում է թղթակից Եվգենի Սցեպուրոն: Նորից ծառացավ Նելսոնին հերոսի Ոսկե աստղով պարգեւատրելու հարցը: 1944 թվականի օգոստոսի 18-ին հրամանատարությունը Մոսկվա ուղարկեց պարգեւատրման հերթական թերթիկը, փաստաթղթում նշելով միայն թշնամու ոչնչացված խոշոր մարտական օբյեկտները՝ «...մեկ ականակիր նավ, երկու պահականավ, մեկ ականազերծիչ նավ, երկու պահակային կատեր, երկու տորպեդային կատեր, հինգ լողամիջոց՝ մինչեւ 18 հազար տոննա ընդհանուր ջրատարողությամբ, քառասուն երկաթգծային վագոններ, մեկ շոգեքարշ, վերացրել է չորս գետանցամիջոց, իրագործել է 80 պայթյուն եւ 70 հրդեհում, խփել է օդային մարտում երկու եւ ցամաքում՝ 25 տարբեր տեսակի ինքնաթիռներ»: Եվ այս ամենը՝ առանց ներառելու մոտ հազար ավտոմեքենաները, ավելի քան հինգ հազար միավոր կենդանի մարտաուժը եւ այլն, եւ այլն:

Եվ այսպես, 1944 թվականի օգոստոսի 18-ին Նելսոն Ստեփանյանը նորից ներկայացվեց կառավարական բարձրագույն պարգեւի՝ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման:

Ավելորդ խոսակցություններից խուսափելու համար այս անգամ պարգեւատրման հայտը Մոսկվա ուղարկելու փաստը գաղտնի պահեցին նույնիսկ Նելսոնից: Այսպիսով, տեսականորեն Նելսոն Ստեփանյանը արդեն 1944 թվականի օգոստոսի 18-ին Խորհրդային Միության կրկնակի հերոս էր: Մինչեւ մահը նրան մնացել էր 92 օր: Ես ուսումնասիրել եմ «մեր շուշեցու» ապրած այդ օրերից յուրաքանչյուրը: Բանն այն է, որ մասնագետների եւ պատմաբանների, զինակիցների եւ անմիջական հրամանատարության պնդմամբ, Ստեփանյանն իրական սխրագործության բարձունքը նվաճեց կյանքի հենց վերջին երկու-երեք ամսում եւ առանձնապես վերջին մարտում, որի համար պարզապես անհնար էր չարժանացնել Խորհրդային Միության հերոսի կոչման:

Մահից ոչ շատ առաջ Նելսոնը գրել է իր հուշատետրում. «Ես չեմ հոգնել կռվելուց: Ես պարզապես հոգնել եմ պատերազմից...երբեմն որքա՜ն եմ ցանկանում վեր խոյանալ երկինք, դեպի աստղերը: Ուզում եմ լինել անհասանելի, մնալ աստղերի մեջ այնքան ժամանակ, մինչեւ որ կոչնչացվեն բոլոր մահաբեր զենքերը աշխարհում: Եվ աստղային բարձունքից կսպանեմ յուրաքանչյուրի, ով զենք կվերցնի ձեռքը: Կռմբակոծեմ յուրաքանչյուրի տունը, ով կհամարձակվի ավերել ուրիշի տունը: Ես աստղերով կգրեմ երկնքի վրա, որ մինչեւ աշխարհի վերջը պատժվելու է ոչ միայն ներկայիս, այլեւ անցյալի չարիքը: Միայն այդպես կարելի է կանխել այն ապագայում...»:

1944 թվականի նոր սկսված դեկտեմբերի յուրաքանչյուր օրն ավելացնում էր «հաջող թռիչքների» քանակը: Գրագիր-տարեգիրները հատուկ թալմուղների մեջ էին գրանցում ոչ միայն նորանոր թվեր, այլեւ ջանում էին յուրովի նկարագրել մարտը: Ծառայակիցների հիշողություններից կարելի է իմանալ, որ Նելսոնն ասես նախազգում էր մոտալուտ մահը: Նա օդ էր ելնում մի տեսակ կատաղի, սրընթաց, դեմ հանդիման գնալով հակառակորդին:

Երեսունմեկ տարի, ութ ամիս եւ տասնչորս օր ապրեց Նելսոնը երկրի վրա եւ երկնքում: Նրա մասին պատմել են հազարավոր ակնարկներ, հոդվածներ, գրվել են գրքեր, նկարահանվել ֆիլմեր: Կյանքն ինչպես մեկ հիասքանչ ակնթարթ: Լեցուն կրքով ու մաքառմամբ: Բայց թերեւս ամենաանկրկնելին վերջին րոպեներն էին, որ դարձան նրա անմահության սկիզբը: Ահա պետական արխիվներում պահպանված առաջին գրառումը. «1944 թվականի դեկտեմբերի 14-ի առավոտյան հետախուզությունը Լիեպայայի շրջանում հայտնաբերեց թշնամու նավերի կուտակում: Գրոհող օդաչուներին տրված մարտական հրամանը ծայր աստիճան հակիրճ էր՝ «Գրոհել եւ ոչնչացնել»: Շարժիչների ռոռոցը միախառնվեց զենիթային ստվար կրակոցներին: Եթերում գերմաներեն հնչեց տագնապած ձայնը. «Ուշադրությո՛ւն: Ուշադրությո՛ւն: Երկնքում Նելսոնն է»: Գրոհային ինքնաթիռներն իրենց անվախ հրամանատարի առաջնորդությամբ սլացան դեպի նպատակակետ: Ինչպես միշտ, ռումբերը տեղ հասան ճշգրտությամբ: Այդ մարտը կարճատեւ էր: Ֆաշիստական վեց նավեր, բեռնված պարենով ու զինամթերքով, ջրասույզ եղան: Բայց գրոհայիններն օդանավակայան վերադարձան առանց իրենց հրամանատարի»:

Գնդապետ Մանժոսովը փաստաթուղթը կազմեց ամենատաք հետքերով. «Նելսոն Գեորգիեւիչ Ստեփանյանի ինքնաթիռը վառվեց: Վայրկենապես գնահատելով իրավիճակը եւ հասկանալով, որ այրվող Իլ-2-ն անհնար է վայրէջքի իջեցնել սեփական տարածքում, նա կտրուկ շրջադարձ կատարեց եւ մխրճվեց հակառակորդի փոխադրամիջոցների տեղակայանքում»:

Երբ տարածքն ազատագրեցին եւ գտնեցին «մեր շուշեցու» զոհվելու վայրը, պայթյունի տեղից մեծ հեռավորության վրա գտան Իլ-2-ի թեւի ձյան միջից ցցված բեկորը, որի վրա գրված էր հերոսի մոր անունը՝ «Վարդանուշ»:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
*(Մասնակի կրճատումներով)*

# Եգիպտոսի ՆԳ նախարարն իսլամիստներից պահանջեց հեռանալ հրապարակներից

## *Սինայն արդեն ռազմական գոտի է*



Եգիպտոսի ժամանակավոր իշխանությունները մտածում են Կահիրեում արտակարգ դրություն հաստատելու մասին: Նման քայլի շնորհիվ պետք է կարգուկանոն հաստատվի այն թաղամասերում, որտեղ արդեն 1 ամիս ցույցեր են անում պաշտոնանկ նախագահ Մուհամմեդ Մուրսիի կողմնակիցները: Սպանության եւ առեւանգումների մեղադրանքով Մուրսիի ձերբակալությունից հետո անկարգությունների նոր ալիք է սկսվել: Շաբաթավերջին ոստիկանների եւ իսլամիստների բախումների ընթացքում սպանվեց 80 մարդ, վիրավորվեցին հարյուրավոր ցուցարարներ:

Նրանցից մեկը՝ Խալեդ Հաշեմը, BBC-ի թղթակցին ասել է, թե ոստիկանները զենք են կիրառել խաղաղ երթի մասնակիցների դեմ:

Ոստիկանությունը պնդում է, թե ցուցարարների դեմ կիրառվել է միայն արտասվաբեր գազ, իսկ սադրանքներ կազմակերպել են հենց իսլամիստները, որոնցից շատերը կալանավորվել են հրազենը ձեռքներին:

Եգիպտոսի ներքին գործերի նախարար Մուհամմեդ Իբրահիմը երկուշաբթի օրը իսլամիստներից պահանջել է հեռանալ քաղաքային հրապարակներից, այլապես «ոստիկանությունը կգործի անչափ կոշտ ձեւով»: Սակայն Մուրսիի կողմնակիցները մտադիր չեն հեռանալ: Ընդհակառակը, հեռանում են Կահիրեի բազմաթիվ բնակիչներ, որոնց կյանքը դժոխային է դարձել չորս շաբաթ օր ու գիշեր չդադարող հանրահավաքների ու ցույցերի պատճառով:

Զինված ուժերի շտաբը Սինայի թերակղզի է մտցրել 2-րդ եւ 3-րդ դաշտային բանակները, զրահատեխնիկա, տանկեր, որպեսզի ջիհադիստական զինված խմբավորումները չկարողանան թափանցել Կահիրե, իսկ Գազայի հատվածի գրոհայինները չմիանան «Մուսուլման եղբայրների» կողմնակիցների ջոկատներին: Գործողությունը կոչվում է «Անապատի փոթորիկ»: Թերակղզու հյուսիսում եւ կենտրոնում զորքերին դիմակայում են հազարավոր զինված իսլամիստներ: Սինայի մատույցները փակ են, այսօր դա ռազմական գոտի է:

# Գալիսիայում կործանված գնացքի մեքենավարն արձակվել է գրավի դիմաց

Իսպանիայի հյուսիսում՝ Գալիսիայում հուլիսի 24-ին վթարի ենթարկված մարդատար գնացքի մեքենավարը՝ 52-ամյա Ֆրանսիսկո Խոսե Գարսոն Ամոն, կիրակի երեկոյան դռնփակ դատական նիստի որոշմամբ ազատ է արձակվել գրավի դիմաց: Այդ մասին հաղորդում է «Սքայ նյուզ» հեռուստաընկերությունը, նշելով, որ գրավի գումարը չի հրապարակվել:

Ռելսերից դուրս թռած գնացքի մեքենավարը մեղադրվում է հանցավոր անփութության մեջ: Մադրիդ-Ֆեռոլ երթուղու մարդատար գնացքը հուլիսի 24-ի երեկոյան կործանվեց Սանտյագո դե Կոմպոստելա քաղաքի մատույցներում: Վերջին տվյալներից համաձայն, զոհերի թիվը 79 է, վիրավորներինը՝ 130: Հիվանդանոցում մնացող տասնյակ վիրավորներ, ըստ բժիշկների, ծանր կամ օրհասական վիճակում են: Գնացքի կործանման պաշտոնական վարկածը դեռ չի հրապարակվել, բայց հայտնի է, որ 80 կմ/ժամ արագություն թույլատրող ուղեմասում շարժակազմը սլացել է 194 կմ/ժամ արագությամբ: Նման պայմաններում արգելակելը չէր կարող դյուրին լինել: Նախատեսվում է միջադեպի պաշտոնական վարկածները հրապարակել գնացքի «սեւ արկղերի» վերծանումից հետո:

# Կաննում կողոպտել են Leviev ոսկերչական ֆիրմայի ցուցահանդեսը

## *Հափշտակված զարդերը գնահատվում է 40 մլն եվրո*



Հուլիսի 28-ին ժամը 13-ն անց 30-ին Ֆրանսիայի միջերկրածովյան Կանն քաղաքի «Կառլտոն» հյուրանոց է թափանցել ինքնաձիգ ատրճանակով զինված մի հանցագործ: Հուլիսի 20-ից մինչեւ օգոստոսի 31-ը այդ հյուրանոցում անցկացվում է Leviev հանրահայտ ֆիրմայի ոսկերչական եւ ակնագործական արտադրանքների, ինչպես նաեւ թանկարժեք ժամացույցների ցուցադրություն: «Ֆիգարո» թերթը հաղորդում է, որ հանցագործի ներխուժման պահին ոսկերչական ցուցահանդեսում եղել են այցելուներ եւ նույնիսկ ոստիկաններ, բայց գլուխն ու դեմքը ծածկած կողոպտիչը գործել է շատ արագ եւ առանց որեւէ կրակոցի հեռացել է՝ տանելով շոու-բիզնեսի աստղերի վարձակալման համար նախատեսված թանկարժեք զարդեր:

Տվյալ հանցագործությունը քննում է Նիցցայի դատական ոստիկանությունը: Փորձագետները հափշտակված իրերի ընդհանուր արժեքը գնահատում են 40 մլն եվրո (մոտ 53 մլն դոլար):

L'Express շաբաթահանդեսի կայքէջը գրում է, որ «Կառլտոն» հյուրանոցում հուլիսի 28-ին կատարված հանդուգն կողոպուտի ավարը արժեքով 2-րդն է վերջին տասնամյակում Ֆրանսիայում իրականացված խոշորագույն կողոպուտների մեջ: Առաջինը կամ դարի կողոպուտը տեղի էր ունեցել 2008 թ. դեկտեմբերին Փարիզի ոսկերչական խանութներից մեկում: Այն ժամանակ հափշտակված թանկարժեք իրերի ընդհանուր արժեքը գնահատվում է 80 մլն եվրո:

Այս տարի Կաննում միայն միջազգային կինոփառատոնի օրերին կատարվեցին երկու բավական խոշոր կողոպուտներ: Մայիսի 17-ին հափշտակվեցին Chopard ֆիրմայի զարդեր՝ 1 մլն եվրո արժեքով, իսկ մայիսի 21-ին գողերի ավար դարձավ De Grisogono ոսկերչական ընկերության ավելի քան 2 մլն եվրո գնահատված ադամանդե մանյակը:

Իսրայելական լրատվամիջոցները հաղորդում են, որ միլիարդատեր Լեւ Լեւաեւը ալմաստի արդյունահանման ոլորտում ներդրումներ անող ամենահարուստ մարդկանցից մեկն է: Նա Աֆրիկայում ունի հանքեր, Ռուսաստանում՝ ալմաստ արդյունահանող ու մշակող ձեռնարկություններ, Անգոլայի Catoca խոշորագույն հանքավայրը մշակող կոնսորցիումի մասնակից է:

«ՆՈՐ ԱԼԻՔԻ» ՀԵՏՔԵՐՈՎ

# Մինչեւ ե՞րբ...

Ավարտվեց հերթական հիանալի «Նոր ալիքը»:

Հայտնաբերվեց ոչ միայն արժանի հաղթողը` կուբացի Ռոբերտոն, այլեւ ի հայտ եկան շատ ու շատ փայլուն կատարողներ:

Ապացուցվեց, որ «Արմենիա» հեռուստատեսության կողմից հայտնաբերված Հայաստանի ձայնը ճիշտ էր ընտրված, որ մեր երաժշտական համաստեղությունում ծնվել է նոր անուն` Մերի Մնջոյանը, որը դեռ իր խոսքը կասի եւ կշարունակի հիացնել բոլորիս: Մենք արդեն սովորել էինք «Նոր ալիքում» մեր երգիչների հաղթարշավին, սակայն այս անգամ խիստ հիասթափվեցինք:

8-րդ տեղ: Մի՞թե մեր շնորհաշատ աղջնակը, որն արդեն գերել էր հանդիսատեսին եւ ժյուրիին եւ առաջին երկու երգից հետո լավագույն եռյակում էր, արժանի էր դրան:

Ո՛չ, իհարկե ո՛չ: Անգամ Մելաձեների տգեղ պահվածքը չէր կարող խանգարել նրա հաղթարշավին: Բայց ի՞նչ պատահեց, ինչո՞ւ Մաշան հետ մղվեց: Մեղավորն այստեղ Երեւանում` Մաշայի ելույթները նախապատրաստողների մեջ պետք է գտնել, ոչ թե ժյուրիի: Մաշան իրոք պարտվեց երրորդ երգի ժամանակ, պարտվեց, որովհետեւ այդ երգը գրել էին եւ մատուցել ոչ թե պրոֆեսիոնալները, այլ դիլետանտները, որոնք անկախության տարիներին տեղ գտան երաժիշտների շարքում, ի հայտ եկած նոր փողատերերի, քեֆչիների շնորհիվ: Նրանց մեծարեցին, դարձնելով աստղ, այն էլ` «վաստակավոր»: Եկեք անկեղծ լինենք: Ինչո՞ւ նման պատասխանատու երգի հեղինակը պետք է Հայկոն լիներ, ո՞ր երաժշտական շնորհքի համար: Կարո՞ղ եք հիշել նրա երգերից մեկը, որ անհետացած չլինի:

«Երգի հեղինակը սիրված երգերի հեղինակ Հայկոն է»: Երեք օր անընդհատ կրկնում էր ընդհանրապես իրեն շատ զուսպ պահած գրավիչ եւ գրագետ մեկնաբան Լիլի Հովերը: Մի՞թե Լիլին մոռացել է կամ չգիտի, որ Հայկոն դադարել է երգիչ լինելուց այն պահից, երբ մշակույթի նախարարը արգելեց ֆոնոգրամայով երգելը, նրա դիապազոնը այնքան ցածր է, որ նա բարձր տոնայնությամբ չի կարող երգել, ինչը, ընդհակառակը, Մաշան բարձր նոտաներում է փայլում: Այդ «երգը» կսազեր միայն իրեն` Հայկոյին:

Մի՞թե չեք տեսնում, որ նրա` կինոների համար գրած երաժշտությունը բաղկացած է միայն երեք ակորդից, բայց դա չխանգարեց, որ նրան երեք տարի անընդհատ ճանաչեն կինոյի համար գրած լավագույն կոմպոզիտոր: Հենց այս ճանաչողներն էլ, ինչպես վերեւում նշեցի` քեֆչիները, գտել բերել էին Հայկոյին: Ինչո՞ւ մեր իսկական կոմպոզիտորները հեռու մնացին Մաշայի համար երաժշտություն գրելուց:

Ինձ հիացնում են «Հայաստանի ձայնի» իրոք հիանալի մարզիչները, որոնք բազմաթիվ լավագույն կատարողների միջից գտան եւ հայտնաբերեցին Մաշային: Նրանք դեռ Երեւանում լսե՞լ են այդ «երգ» կոչեցյալը, չե՞ն պայքարել այն Մաշայի վզին փաթաթելու համար, թե՞ քեֆչիները ինչ ուզել` արել են:

Մի բան փաստ է, որ «Արմենիա» հեռուստատեսությունը մինչեւ վերջ չտարավ իր լավ սկսած գործը, իսկ նրան էլ չօգնեցին «Նոր ալիքի» «երաժիշտ» կազմակերպիչները: Ափսոս, որ դեռ չենք կարողանում ազատվել դիլետանտներից:

ԿԱՌԼԵՆ ՔԱԼԱՇՅԱՆ

# ԽՍՀՄ ջազի երախտավոր Կիմ Նազարեթովի անվան շուրջ չեն դադարում Ռոստովում զարգացող կրքերը



Արդեն մի քանի ամիս է` Ռոստովում չեն հանդարտվում հանրահայտ ջազ երաժիշտ, ԽՍՀՄ ջազի երախտավոր, դիրիժոր Կիմ Ավետիքի Նազարեթովի անվան շուրջ զարգացող կրքերը: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը` վկայակոչելով «Հայկական ջազ» նախագծի կայքը, խնդիրը նրանում է, որ Ռոստովի Ջազ նվագախումբը հիմնադրել է Նազարեթովը դեռեւս 1963 թվականին: Նրա մահից հետո նվագախումբը գլխավորել է Յուրի Կինուսը: Իսկ 2008 թվականին դիրիժորի որդին` Փիթեր Նազարեթովը, հիմնադրել է մեկ այլ նվագախումբ եւ, որպես ժառանգորդ, անվանել այն հոր անունով: Արդյունքում, Ռոստովում այժմ կա Կիմ Նազարեթովի անվամբ երկու նվագախումբ: Առաջինը քաղաքային, իսկ մյուսը` կազմված կոնսերվատորիայի դասախոսական անձնակազմից եւ ուսանողներից:

Երկուսն էլ հավակնում են անվանվել որպես Կիմ Նազարեթովի անվան նավագախումբ եւ նրանց վեճը հաճախ հասնում է ծայրահեղությունների:

Ջազային հասարակությունը հուսով է, որ կողմերը շուտով փոխզիջման կգան, քանի որ սեպտեմբերին Քաղաքի օրվա առիթով անցկացվելու է մեծ նվագախմբերի հերթական փառատոնը:

*«ԱՐՄԵՆՊՐԵՍ»*

# Սայաթ-Նովայի մասին մուլտֆիլմը` Ազգային կինո

«Հայկական կինոյի զարթոնք» կինոկենտրոնի խորհուրդը «Ազգային կինո» մրցանակ է շնորհել ռեժիսոր Անդրանիկ Թորոսյանի «Սայաթ-Նովա. վերջին աղոթք» մուլտիպլիկացիոն ֆիլմին` հայ մեծ բանաստեղծ-աշուղի կերպարը անիմացիոն տեսքով հավերժացնելու եւ մատաղ սերնդին ներկայացնելու համար:

Ի դեպ, նշենք, որ «Սայաթ-Նովա. վերջին աղոթք» մուլտֆիլմը հայ մեծ բանաստեղծի` 2012թ. նշված 200-ամյակին նվիրված եզակի գործերից է:

«Սայաթ-Նովա. վերջին աղոթք» մուլտֆիլմը կարելի է դիտել հետեւյալ հղումով.

**https://www.youtube.com/watch?v=FoHh-3HEzko**

ԱՐՍԵՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ

«Հայկական կինոյի զարթոնք կինոկենտրոն» ՀԿ նախագահ



# Սեր, աշխատասիրություն, նվիրում

## *Գեղանկարիչ Սամվել Ղարիբյանի հիշատակին*

Ճիշտ մեկ տարի առաջ, 56 տարեկան հասակում, կյանքից հեռացավ բազմաշնորհ գեղանկարիչ Սամվել Ղարիբյանը, խոր ցավ պատճառելով իր հայրենի քաղաքի` Վանաձորի արվեստասերներին, իր ընկերներին, գործընկերներին եւ, առաջին հերթին, հարազատներին: Արդարեւ, նա կյանքից հեռացավ ուժերի ծաղկման, հասունության շրջանում, ստեղծագործական նոր` ավելի իմաստնացած եռանդի շրջանում, կիսատ թողնելով բազմաթիվ գործեր, ստեղծագործական ծրագրեր, որոնք մարմին էին ստանալու ու, թերեւս, դառնային իսկական գլուխգործոցներ` հարստացնելով մեր գեղանկարչության անդաստանը: Եվ ոչ



միայն ստեղծագործական, այլեւ ուսումնամանկավարժական ծրագրեր, քանզի Սամվել Ղարիբյանի երկրորդ բնությունը մանկավարժությունն էր, որն իր լիարժեք դրսեւորման հնարավորությունն էր ստացել Վանաձորի նկարչական դպրոցում, որը իրավացիորեն վստահվել էր նրա տնօրինությանը:

Սամվել Ղարիբյանը, լինելով բնութենապաշտ գեղանկարիչ, խորապես կապված էր Լոռվա բնության հետ: Թեեւ նրա գործերում չի նկատվում քաղաքային կյանքի պատկերների պակասը: Հակառակ բազմաթիվ առիթների, նա բնավ ու երբեք չհեռացավ այդ բնաշխարհից, նույնիսկ աղետալի երկրաշարժից հետո: Ընդհակառակը, որպես մարդասեր եւ ընկերասեր, որպես ազգասեր մարդ` իր ամեն ինչը տրամադրեց ողբալի մարդկանց հոգեկան կորով ներարկելուն, թեեւ մխիթարանքի ոչ պակաս կարիքն ուներ նաեւ ինքը: Շուտով Վանաձորի նրա արհեստանոցը դարձավ արվեստագետների ու մտավորականների հանդիպման վայր: Քաղաքի գեղարվեստական կյանքի ակտիվացման, շատ ծրագրերի ողեգրման համար այդ արվեստանոցը, որտեղ մարդիկ հաճախ գալիս էին նաեւ հոգեկան անդորր գտնելու, դարձավ ծննդավայր: Նրա աշակերտներն էլ այնտեղ էին գալիս «ընկեր Սամվելից» նկարչության գաղտնիքները բացահայտելու, սովորելու: Շատ շատերի համար նա վստահելի ընկեր էր, քչախոս` իր խոսքի մեջ, բայց հասնող-օգնող, խորհրդատու, զգայուն հոգու տեր մի անձնավորություն, որի հիմնական բնութագիրը վստահելիությունն էր, ինչպես իր ստեղծած արվեստը, որը ոչ մի երկդիմի, կասկածելի բան չունի իր մեջ, այլ` խաղաղություն, հոգեկան անդորրություն, բարություն պարգեւող նկարագիր, ինչպես Լոռվա բնությունն է եւ վերջինիս ծնունդ լոռեցիները:



Բարություն ճառագայթող նրա կտավները միշտ կհիշեցնեն իրենց ստեղծողի մասին:

### Կենսագրական գծեր

*Ծնվել է 1956 թ. նոյեմբերի 28-ին Կիրովականում (Վանաձոր): 1963-ին ընդունվել է Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց, զուգահեռաբար սովորել Կիրովականի Ստ. Աղաջանյանի անվան նկարչական դպրոցում, որն ավարտել է 1975-ին: 1976-ին ընդունվել եւ 1980-ին ավարտել է Երեւանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: Երիտասարդ տարիներին զբաղվել է նաեւ սպորտով: ՀՍՍՀ ազատ ոճի ըմբշամարտի եւ ազգային կոխ ըմբշամարտի բազմակի չեմպիոն էր: ԽՍՀՄ սպորտի վարպետ: Տալլին քաղաքում կազմակերպված ցուցահանդեսում գեղանկարչական լավագույն աշխատանքների համար արժանացել է ոսկե մեդալի: Արժանացել է բազմաթիվ պատվոգրերի եւ շնորհակալագրերի: Աշխատել է թիվ 7 միջնակարգ դպրոցում` որպես նկարչության ուսուցիչ (1980 թ.), Ստ. Աղաջանյանի անվան գեղավեստի դպրոցում` ուսուցիչ (1980-88 թթ.), Վանաձորի մշակույթի կենտրոնում` նկարչական ստուդիայի ղեկավար (1992-93 թթ.), թիվ 1 մշակույթի տանը` նկարչական ստուդիայի ղեկավար (1993 թ.), «Ինտերկապ» հեռուստաստուդիայում` նկարիչ-ձեւավորող (1993-97 թթ.), իսկ 1997-2003-ին աշխատել է «Ղարս» կարի ֆաբրիկայում` նկարիչ-մոդելավորող, կոնստրուկտոր, այնուհետեւ` գլխավոր ինժեներ: 1980-ից մասնակցել է քաղաքային եւ հանրապետական ցուցահանդեսների: 1995-ից ՀՀ նկարիչների միության անդամ էր: Նրա աշխատանքներից կան մի շարք երկրների մասնավոր հավաքածուներում` ԱՄՆ, Շվեյցարիա, Լիբանան, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա եւ այլուր:*

*Անհատական ցուցահանդես է տվել.*

*1994-ին` Վանաձորի կերպարվեստի թանգարանում,*

*1995-ին` Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի ճեմասրահում,*

*1996-ին` Երեւանի «Գոռ» ցուցասրահում,*

*2000-ին` Գյումրիի գեղագիտական կենտրոնում:*

*Մահացել է 2012 թվականի հուլիսի 28-ին:*

# Հայկական մշակութային երեկո Ռումինիայի Տուլչա քաղաքում

Հուլիսի 27-ին Ռումինիայի Տուլչա քաղաքում, «Ազգամիջյան ֆիլմերի շաբաթ» փառատոնի շրջանակներում տեղի ունեցավ հայկական երեկո: Տուլչայի նահանգային իշխանությունների հրավերով, Ռումինահայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանի եւ Ռումինահայոց միության փոխնախագահ, պատգամավոր Վարուժան Փամբուկչյանի կողքին միջոցառմանը ներկա էր նաեւ Ռումինիայում ՀՀ դեսպան Համլետ Գասպարյանը:

Տուլչայի նահանգի փոքրամասնություններին նվիրված այս հերթական 8-րդ փառատոնն անցկացվում էր Ռումինիայի կառավարության եւ նահանգային ու քաղաքային իշխանությունների աջակցությամբ, որին իրենց մասնակցությունն էին բերել տեղի ռուս, ուկրաինական, իտալական, գերմանական, հունական, թուրք-թաթարական, գնչուական եւ վերջապես հայ համայնքային միությունները:

Հուլիսի 27-ի երեկոյան Տուլչայի կենտրոնական հրապարակում իրենց ազգային երաժշտարվեստը ցուցադրեցին տեղի գնչուական գործիքային նվագախումբն ու Բուխարեստի հայկական «Վարդավառ» պարախումբը: Համերգային ծրագրից հետո ցուցադրվեց ռումինահայ ռեժիսոր Ֆլորին Գեւորգյանի «Մեկ գիշերային սեր» կարճամետրաժ ֆիլմը:

Միջոցառման շրջանակներում, դեսպան Գասպարյանը համագործակցության կապեր հաստատելու շուրջ զրույց ունեցավ Տուլչա նահանգի պրեֆեկտ Լուչիան Սիմիոնի հետ: Լուչիան Սիմիոնը, ով միաժամանակ Ռումինահայոց միության Տուլչայի մասնաճյուղի նախագահն է, պատրաստակամություն հայտնեց նպաստելու նահանգի եւ Հայաստանի որեւէ մարզի միջեւ կապերի հաստատմանը:

# Արաս Օզբիլիս. «Յուրան եւս նպաստեց, որ ընտրեմ «Սպարտակը»

***Ֆուտբոլի Ռուսաստանի առաջնության 3-րդ տուրում Արաս Օզբիլիսը նորամուտը նշեց Մոսկվայի «Սպարտակի» կազմում՝ 70-րդ րոպեին փոխարինելով Էյդեն Մակգիդիին: Այդ խաղում Արասը կարող էր նորամուտը գոլով նշել, սակայն նրա հուժկու հարվածից հետո «Դինամոյին» փրկեց դարպասի հորիզոնական ձողը: Օզբիլիսը հնարավորություն չունեցավ համագործակցելու Յուրա Մովսիսյանի հետ, որն այդպես էլ մնաց պահեստայինների նստարանին: Սակայն առանց նրա էլ «Սպարտակը» 4-1 հաշվով համոզիչ հաղթանակ տոնեց եւ 9 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը:***

***Իսկ մինչեւ «Սպարտակում» նորամուտը նշելը Արաս Օզբիլիսն առաջին հարցազրույցն է տվել ակումբի պաշտոնական կայքին:***



**- Արաս, ճի՞շտ է, որ քեզնով հետաքրքրվում էին մի շարք թիմեր եւ ինչո՞ւ ընտրեցիր «Սպարտակը»:**

- Դա ճիշտ է, ես այլ ակումբներից էլ առաջարկներ ունեի: Սակայն, երբ «Սպարտակը» ցանկություն հայտնեց ինձ հրավիրելու թիմ, միանգամից հասկացա, որ ցանկանում եմ այս ակումբում խաղալ: «Սպարտակը» Ռուսաստանի ամենահեղինակավոր եւ հավակնոտ թիմն է, որի խաղաոճն ինձ շատ հարմար է:

**- Յուրա Մովսիսյանի «Սպարտակում» հանդես գալը ե՞ւս իր դերը խաղաց:**

- Իհարկե: Մինչեւ «Սպարտակ» տեղափոխվելը զրուցել եմ Յուրայի հետ, որից միայն դրական խոսքեր եմ լսել ակումբի մասին: Բնականաբար, դա եւս նպաստեց, որ ընտրեմ «Սպարտակը»:

**- Սպարտակցիներից կա՞ն եւս ֆուտբոլիստներ, որոնց հետ ծանոթ ես:**

- Անձամբ ծանոթ չեմ:

**- Կարելի՞ է համարել, որ «Կուբանի» կազմում «Սպարտակի» դարպասը խփած 2 գոլերը քո մարզական կարիերայում ամենագեղեցիկն էին:**

- Այո, հնարավոր է, որ դրանք ամենագեղեցիկ գոլերից էին: Ի դեպ, «Կուբանի» կազմում մասնակցել եմ «Սպարտակի» հետ կայացած 2 հանդիպումներին, որոնք ավարտվել են միեւնույն 2-2 հաշվով: 2 խաղում էլ ինձ հաջողվեց գոլ խփել:

**- Դու «Սպարտակի» դեմ խաղացել ես նաեւ 2011-ին «Այաքսի» կազմում Եվրոպայի լիգայի 1/8 եզրափակիչում: Ինչպիսի՞ հիշողություններ են մնացել այդ խաղից:**

- Մենք Մոսկվայում պարտվեցինք 0-3 հաշվով: Ես 45 րոպե խաղացի: Հիշում եմ, որ գոլային մեկ պահ ունեցա: Վատ չհարվածեցի, սակայն գնդակը դիպավ դարպասաձողին: Այդ խաղում «Սպարտակը» շատ բարձրորակ ֆուտբոլ ցուցադրեց:

**- Եթե Վալերի Կարպինը քեզ ընդգրկի «Դինամոյի» հետ խաղի մասնակիցների թվում, պատրա՞ստ ես խաղալու:**

- Պատրաստ եմ: Իսկ ընտրությունը գլխավոր մարզչինն է:

**- Դինամոյականներին գոլ խփե՞լ ես:**

- Այո: Ընդ որում դա «Կուբանի» կազմում իմ առաջին խաղերից մեկն էր: Տեսնենք, թե ինչպես կդասավորվի առաջին ելույթս «Սպարտակի» կազմում:

**- Ինչո՞ւ ընտրեցիր 11 համարի մարզաշապիկը:**

- Դա թիմում ազատ համարներից մեկն էր: Թեեւ 24 համարի մարզաշապիկը, որով խաղում էի «Կուբանում», եւս զբաղված չէր: Սակայն «Սպարտակում» նոր կյանք եմ սկսում, ուստի ինձ համար նոր համարի մարզաշապիկ ընտրեցի:

# Լուիս Հեմիլտոնն առաջին Գրան պրին շահեց

«Մերսեդեսի» ավտոմրցարշավորդ Լուիս Հեմիլտոնը «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի ընթացիկ առաջնությունում առաջին Գրան պրին շահեց: Նա հաղթող ճանաչվեց Հունգարիայում անցկացված աշխարհի առաջնության փուլում: Դա Հեմիլտոնի 4-րդ հաջողությունն է Հունգարիայում անցկացված Գրան պրիի խաղարկություններում:



2-րդ տեղը գրավեց ֆինն ավտոմրցարշավորդ Կիմի Ռայկոնենը, իսկ լավագույն եռյակը եզրափակեց Սեբաստիան Ֆետելը:

Հունգարիայում տոնած հաղթանակի շնորհիվ Հեմիլտոնն ընդհանուր հաշվարկով վաստակեց 99 միավոր եւ տեղափոխվեց 4-րդ հորիզոնական: Առաջատարի դերը պահպանեց Սեբաստիան Ֆետելը, որն ունի 157 միավոր: Ֆեռնանդո Ալոնսոն 123 միավորով հետապնդում է Ֆետելին: Լավագույն եռյակը եզրափակում է Կիմի Ռայկոնենը՝ 116 միավոր:

«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում 250 միավորով առջեւից է ընթանում «Ռեդ Բուլը»: 2-րդ տեղում 183 միավորով «Մերսեդեսն» է: «Ֆերարին» 180 միավորով եզրափակում է լավագույն եռյակը:

# 3 սերբ ֆուտբոլիստներ կխաղան «Արարատում»

**«Արարատն» ավարտեց ուսումնամարզական հավաքը Սերբիայում: Ստուգողական 3-րդ խաղում արարատցիները ոչ-ոքի (1-1) խաղացին Հայֆայի «Հապոելի» հետ: Արարատցիներից գոլի հեղինակ է դարձել սերբ հարձակվող Ալեքսանդր Ռակիչը: Վերջինս մինչեւ տարեվերջ պայմանագիր է կնքել ակումբի հետ: Եվս մեկ սերբ ֆուտբոլիստ՝ Դարկո Բոնզիչը մինչեւ մրցաշրջանի ավարտը հանդես կգա «Արարատի» կիսապաշտպանական օղակում:**

**Հիշեցնենք, որ ավելի վաղ «Արարատի» հետ պայմանագիր էր կնքել սերբ կենտրոնական պաշտպան Միլոշ Ստեմանկովիչը:**

# Հայ ձյուդոյիստները մասնակցում են համատեղ հավաքին

Ձյուդոյի Հայաստանի հավաքականի անդամներ Հովհաննես Դավթյանը, Արմեն Նազարյանը, Տիգրան Վարոսյանը, Գոռ Մկրտչյանը, Երջանիկ Կարապետյանն ու Ռոզա Խաչատրյանը Սոչիում մասնակցում են միջազգային ուսումնամարզական հավաքի: Մարզումներին ներգրավված են 22 երկրների 370 ձյուդոյիստներ: Այս հավաքը կարեւոր փուլ է օգոստոսի 26-ին Ռիոյում կայանալիք ձյուդոյի աշխարհի առաջնությունից առաջ, որին Հայաստանից կմասնակցեն Հովհաննես Դավթյանը (60 կգ) եւ Արմեն Նազարյանը (66 կգ):

# «Բորուսիան» Գերմանիայի սուպերգավաթակիր

**Դորտմունդի «Բորուսիան» դարձավ Գերմանիայի սուպերգավաթակիր՝ սեփական հարկի տակ 4-2 հաշվով պարտության մատնելով Մյունխենի «Բավարիային»: Վնասվածքի պատճառով Հենրիխ Մխիթարյանը ստիպված էր խաղին հետեւել տրիբունայից, իսկ հանդիպումից հետո թիմակիցների հետ տոնեց հաղթանակը:**

**«Բորուսիան» յուրօրինակ ռեւանշի հասավ չեմպիոնների լիգայի եզրափակիչում «Բավարիայից» կրած պարտության դիմաց: «Բավարիան» գլխավորած Խոսեպ Գվարդիոլայի նորամուտը թիմում անհաջող ստացվեց:**

## ՇԱԽՄԱՏ

# Գրիգոր Սեւակ-Մխիթարյանն արժանացավ 2-րդ մրցանակին

**Բրազիլիայի Մարինգա քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում հաջող հանդես եկավ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը՝ 8 հնարավորից վաստակած 6,5 միավորով զբաղեցնելով 2-րդ տեղը: Բրազիլահայ շախմատիստը մեկ միավոր զիջեց մրցաշարի հաղթող, արգենտինացի Սանդրո Մարեկոյին:**

**Մխիթարյանը մրցաշարը սկսեց 4 անընդմեջ հաղթանակով, ապա 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի: 7-րդ տուրում նա իր 5-րդ հաղթանակը տոնեց, իսկ ավարտական պարտիայում հաշտություն կնքեց:**

**Մրցաշարին մասնակցած Արմեն Բրուտյանը 5,5 միավորով գրավեց 19-րդ տեղը:**

# Հայերից լավագույնը Լիլիթ Մկրտչյանի արդյունքն է

**Շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում հայ շախմատիստուհիներից առավել հաջող է հանդես գալիս Լիլիթ Մկրտչյանը, որը 6 տուրից հետո վաստակել է 4,5 միավոր: Նա մեկ միավորով է զիջում աղյուսակը գլխավորող Նինո Խուրցիձեին: Լիլիթը վերջին 3 տուրերում հաղթեց Բահրա Կովանովային, հաշտություն կնքեց Անաստասիա Սավինայի եւ Բելա Խոթենաշվիլու հետ: Մկրտչյանը հայ շախմատիստուհիներից միակն է, որ պարտություն չի կրել:**



**Լիլիթ Գալոյանն ու Մարիա Կուրսովան ունեն 3,5 միավոր: Գերազանց մեկնարկից հետո Կուրսովան զիջեց դիրքերը: Նա հաշտություն կնքեց Օլգա Գիրյայի եւ Միհայելա Սանդուի հետ, իսկ 5-րդ տուրում կրեց առաջին պարտությունը Աննա Մուզիչուկի հետ մրցախաղում: Գալոյանը հաղթեց Դայվա Բատիտեին, ոչ-ոքի խաղաց Աննա Գավաշելիի հետ, պարտվեց Աննա Մուզիչուկին:**

**Աննա Հայրապետյանն ու ռուսաստանցի Ալինա Բալայանը վաստակել են 3-ական միավոր: Աննան հաղթեց Պետրա Կրուպցին, հաշտությոն կնքեց Ադելինա Ֆոյսորի հետ եւ պարտվեց Սոֆիո Գվետաձեին: Ալինան ավելի հաջող խաղաց՝ հաղթանակներ տոնելով Դարիա Վիսանեսկուի եւ Ջուլիա Նովկովիչի նկատմամբ, զիջելով Մարիա Մուզիչուկին:**

# Հրանտ Մելքումյանը գերազանց է մեկնարկել

**Դանիայում սկսված շախմատի մրցաշարում հիանալի է մեկնարկել Հրանտ Մելքումյանը, որը 3 անընդմեջ հաղթանակ է տոնել Թոմ Սկովգարդի, Պետեր Կլինգսի եւ Նորբերտ Ֆրիդրիխի հետ մրցախաղերում: Մելքումյանը 3 միավորով 26 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: Մրցաշարին մասնակցում են 309 շախմատիստներ:**

# Կարեն Գրիգորյանը միանձնյա առաջատարն է

**Իտալիայի շախմատի մրցաշարի 6-րդ տուրից հետո Կարեն Գրիգորյանը 5,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Վերջին 2 տուրերում նա շարունակեց հաղթարշավը եւ առավելության հասավ Խոսե Սեգուրայի եւ Դանիելե Վոկատուրոյի նկատմամբ: Վերջինս Դանիել Պուլվետի հետ 5 միավորով հետապնդում է Գրիգորյանին:**

**4,5 միավոր ունի Հովիկ Հայրապետյանը, որը հաղթեց Ջուլիեն Լամորելիին, ոչ-ոքի խաղաց Ալեքսեյ Բարսովի հետ: Նույնքանի արդյունք ունի նաեւ Կարեն Մովսիսյանը, որը հաղթեց Էնրիկե Ֆեռնանդեսին, ոչ-ոքի խաղաց Միգել Մունոզի հետ:**

**Առողջական խնդիրների պատճառով Մարկ Բասենցյանը չկարողացավ շարունակել ելույթները:**

# Ղարամյանը հետապնդում է առաջատարներին

**Բիլի շախմատի մրցաշարի 5-րդ եւ 6-րդ տուրերում Տիգրան Ղարամյանը հաղթեց Սուսանս Մեգարանտոյին եւ ոչ-ոքի խաղաց Չիաո Հուեի հետ: 6 տուրից հետո հայ շախմատիստը 4,5 միավորով 9-րդ տեղում է: Նա ընդամենը կես միավոր է զիջում Մաթեուշ Բարտելին եւ Պենտալա Հարիկրիշնային:**

# Հաջողությունն ուղեկցեց «Բանանցին»

**Իջեւանի «Արնար» մարզադաշտում «Բանանցը» ստուգողական 2-րդ հանդիպումն անցկացրեց Վրաստանի թիմերի հետ: Այս անգամ մրցակիցը Թբիլիսիի «Սիոնն» էր: «Բանանցը» հաղթեց 4-2 հաշվով: Գոլերի հեղինակներ դարձան Ստեֆանո Լարան, Վալտեր Պողոսյանը, Գագիկ Դաղբաշյանը եւ Գեւորգ Կարապետյանը: Հիշեցնենք, որ առաջին խաղում «Բանանցը» 0-1 հաշվով զիջել էր Ցխինվալի «Սպարտակին»:**

# Գյոզալյանը կարիերան կշարունակի Բելառուսում

Ֆուտբոլի Հայաստանի նախորդ առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանը պայմանագիր է կնքել Բելառուսի բարձրագույն խմբի առաջնության մասնակից «Տորպեդո-ԲելԱզ-ի» հետ: Վերջինս առաջնության 18-րդ տուրից հետո 24 միավորով բաժանում է 5-6-րդ տեղերը:

Հիշեցնենք, որ Գյոզալյանը նախորդ առաջնությունում «Իմպուլսի» կազմում 22 գոլ էր խփել: «Իմպուլսի» լուծարումից հետո Գյոզալյանը թեեւ մարզվում էր «Բանանցում», որում սկսել է ֆուտբոլային կարիերան, սակայն ցանկանում էր արտերկիր տեղափոխվել, ինչը եւ իրականացավ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Նազարբաեւը՝ Պուտին-Ալիեւ հանդիպման միջնո՞րդ

*1-ին էջից*

Virtualaz.org-ն, այնուհանդերձ, իր տեղեկացվածությանը բոլորովին չի կասկածում: Լրատվամիջոցի «բացահայտմամբ»՝ Բաքվում բանակցությունների «առանցքային թեման լինելու է էներգետիկ համագործակցության հեռանկարը»:

Այս իմաստով առանձնահատուկ շեշտադրվում է, որ ռուսաստանյան պատվիրակության կազմում կլինեն «Ռոսնեֆտ» պետական ընկերության եւ «Լուկօյլ»-ի նախագահներ Իգոր Սեչինը եւ Վագիթ Ալեքպերովը: Վերջինս թեեւ այսպես կոչված «Միլիարդատերերի ակումբի», որը Բաքվում համարում են հակաալիեւյան կառույց, անդամ է, սակայն մի քանի օր առաջ ռուսաստանյան լրատվամիջոցներին ասել է, որ «նախագահական ընտրություններում պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը» եւ հույս ունի Բաքվում «առանձին հանդիպել նրա հետ»:

Ռուս-ադրբեջանական հարաբերություններում «շրջադարձի ակնկալիքի» մասին, ինչպես հայտնի է, սկսեցին խոսել, երբ հուլիսի 3-ին Կրեմլի մամուլի ծառայությունը տեղեկացրեց, որ «ռուսաստանյան կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ՌԴ եւ Ադրբեջանի նախագահների հեռախոսազրույցը, որի ընթացքում Վլադիմիր Պուտինը Մոսկվա է հրավիրել Իլհամ Ալիեւին»:

Դրան գրեթե անմիջապես հաջորդեց «Ռոսնեֆտ» պետական ընկերության նախագահ Իգոր Սեչինի ուղեւորությունը Բաքու եւ տետ-ա-տետ հանդիպումն Իլհամ Ալիեւի հետ, որից հետո ադրբեջանական կողմի ակնկալիքների տոնայնությունը փոխվեց այն իմաստով, որ շրջանառվեց Պուտինի՝ Ադրբեջան այցելելու մտադրության մասին «տեղեկատվական արտահոսքը»: Բացառված չէ, որ Իգոր Սեչինն Իլհամ Ալիեւի հետ հանդիպմանը վերջինիս է փոխանցել Վլադիմիր Պուտինի ուղերձը, ինչի հանդեպ պաշտոնական Բաքուն գտնվել է ընկալունակ:

Եթե իրականությանը մոտ է, որ Պուտինի հետ միաժամանակ Բաքվում է գտնվելու նաեւ Ղազախստանի նախագահ Նազարբաեւը, ապա թերեւս նա իր վրա է վերցրել առավել սկզբունքային հարցերում կողմերի միջեւ «կամրջող օղակի» կամ ձեռքբերվելիք պայմանավորվածությունների «երաշխավորի» դերակատարությունը: Բայց առավել հետաքրքրական է, որ նույն ժամանակահատվածում՝ օգոստոսի կեսերին, անոնսավորվել է նաեւ Թուրքիայի նախագահ Գյուլի Բաքվում գտնվելը:

Այսպիսով, եթե տեղեկատվական «արտահոսքերում» գերիշխի իրական պայմանավորվածությունների գործոնը, ապա ստացվում է, որ եկող ամսվա 15-16-ին գրեթե «միաժամանակ Բաքվում կլինեն» Վլադիմիր Պուտինը, Նուրսուլթան Նազարբաեւը եւ Աբդուլլա Գյուլը: Ըստ էության, «նախապատրաստվում է ՌԴ-թուրքախոսս երկրների միություն գագաթաժողով»:

Իսկ այդպիսի հանդիպում «հերթապահ հարցերի» շուրջը չի կազմակերպվում: Haqqin.az-ը, վերաշարադրելով virtualaz.org-ի՝ «դիվանագիտական աղբյուրներից հայթայթած» տեղեկությունները, հռետորական հարց է հնչեցրել. «Կհամոզի՞ Ալիեւին Պուտինը»՝ նկատել տալով, որ «էներգետիկ համագործակցության հեռանկարի անվան տակ, փաստորեն, դրված է Եվրասիական միությանն Ադրբեջանի անդամակցության խնդիրը»:

Եթե ճիշտ է, որ Իլհամ Ալիեւի հետ բանակցություններում Վլադիմիր Պուտինին ընկերակցելու է Նուրսուլթան Նազարբաեւը, մի երկրի նախագահ, որը Եվրասիական միության «հենասյուներից մեկի» համարում ունի, ապա թերեւս կարելի է համաձայնել ադրբեջանական լրատվամիջոցի ընդհանրացման հետ:

Ավելի վաղ եվրասիականության ռուսաստանցի գաղափարախոսներից քաղաքագետ Դուգինը vesti.az-ին տված հարցազրույցում կանխատեսել էր, որ Պուտինը հարցը «հստակ է ձեւակերպելու՝ կամ, կամ»: Այսինքն՝ Ադրբեջանը կամ միանում է Եվրասիական միությանը, կամ վերջնականապես հայտարարում, որ արեւմտյան ուղղությունն է նախընտրում:

Իլհամ Ալիեւի վրա ազդելու համար Վլադիմիր Պուտինը ամենահարմար ժամանակն է ընտրել. առջեւում նախագահական ընտրություններ են, իսկ Բաքվում «իրավիճակ փոխելու» Կրեմլի հնարավորություններին ոչ ոք չի կասկածում:

## Չինաստանում կառուցում են աշխարհի ամենաբարձր երկնաքերը

**Չինաստանում սկսել են կառուցել աշխարհի ամենաբարձր երկնաքերը: Հունանի նահանգի վարչական կենտրոն Չանշա քաղաքում տեղի է ունեցել Sky City («Երկնային քաղաք») շենքի հիմնարկեքի արարողությունը: Շենքը կունենա 838 մետր բարձրություն, 1,05 մլն քառ. մետր ընդհանուր մակերես: Աշտարակի շինարարությունը պետք է ավարտվի 2014-ի ապրիլին: Այդ մասին The Telegraph կայքէջին հայտնել է նախագիծը մշակած Broad Group ընկերության նախագահ Չժան Յուեն: Նախագիծը գնահատվում է 5,2 մլրդ յուան (850 մլն դոլար):**

**«Երկնային քաղաք» երկնաքերը 10 մետրով բարձր կլինի Դուբայի նշանավոր «Բուրջ Խալիֆայից», որը ներկայումս աշխարհի ամենաբարձր շենքն է:**

**Չինական նոր երկնաքերի 202 վերգետնյա հարկերում կտեղավորվեն զանազան ընկերությունների գրասենյակներ, հյուրանոցային համարներ, դպրոց, հիվանդանոց, խանութներ, ռեստորաններ եւ մարզասրահներ, ինչպես նաեւ 30 հազար մարդու համար նախատեսված բնակարաններ: Շենքը կունենա նաեւ 6 ստորգետնյա հարկ: Երկնաքերի վրա կլինի վիթխարի «ուղղահայաց ագարակ», որը աշխատանքով եւ սննդով կապահովի հազարավոր մարդկանց: Այսպիսով, «Երկնային քաղաքում» ամեն ինչ կլինի մոտիկ ու մատչելի:**

**Նորարարական մոդուլային տեխնոլոգիաներով կառուցվող երկնաքերի շինարարությունը կտեւի մոտ 10 ամիս: Դա ռեկորդային արագություն է նման բարձրահարկ շենքի համար («Բուրջ Խալիֆան» կառուցվել է 5 տարուց ավելի):**

**2012-ի հունիսին Չժան Յուեի ընկերությունը ապշեցրել էր աշխարհին՝ համանման տեխնոլոգիայով 636 հարկանի աշտարակի շինարարությունը լիովին ավարտելով 15 օրում:**



**Պ. Ք.**

## Խորհրդատվություն Ռուսաստան մեկնողներին

Մոսկվայում ապրող հայ ուսանողներս մեծ ցավ ենք ապրում, երբ մեր հայրենակիցները փորձանքի մեջ են ընկնում, հատկապես Ռուսաստանի օրենքները չիմանալու հետեւանքով:

Ուսանողական իրավաբանական մեր ակումբը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում մեր հայ եղբայրներին եւ քույրերին: Խնդրում ենք Ռուսաստան գալուց առաջ զանգահարել մեզ, մենք պատրաստակամ ենք անվճար օգնելու, որպեսզի օրենքից դուրս վիճակում չհայտնվեն:

**Հայ ուսանողական իրավաբանական ակումբ**
**+7 925 716 57 87**

ԱՐՁԱԳԱՆՔ

## Բաց նամակ

*Հայաստանի իշխանություններին, Ռուսաստանի հայերի միությանը, Ամերիկայի հայկական համագումարին, Եվրոպայի հայ համայնքին, Հայ առաքելական, Ավետարանական, Կաթոլիկե աշխարհասփյուռ եկեղեցիներին.*

**Այս նամակը գրելու միտքը ծագել է մեկ ամիս առաջ: Որպես դրա հիմնական շարժառիթ հանդիսացավ «Ազգ» օրաթերթի 24 հուլիսի 2013թ. համարում տպագրված Երվանդ Ազատյանի «Հայաստանի ճակատագիրը կշեռքի վրա» ահազանգող հոդվածը:**

**Այսօր Հայաստանի անվտանգությանը սպառնացող երկու հիմնական գործոններ կան: Առաջինը Հայաստանի ժողովրդի ահագնացող նվազումն է՝ արտագաղթը: Երկրորդը՝ Հայաստանի ռազմավարական գործընկեր եւ դաշնակից Ռուսաստանի հետ հարաբերությունների խարխլումը:**

**Վերջինս անվիճելի հետեւանք է թուրք-ադրբեջանական ճկուն, նավթագազային եւ խավիարային հմուտ, բայց խաբուսիկ քաղաքականության:**

**Ռուս ժողովուրդը դեռեւս Աթաթուրքից առաջ եւ նրա օրոք կատարված իրողությունները եւ կեղծ քաղաքականության հետեւանքները չպիտի մոռանա եւ այսօր չգայթակղվի սին խաբկանքներով:**

**Պատմությունը մեկ անգամ չէ, որ ապացուցել է հայ ժողովրդի ճշմարիտ նվիրվածությունը, ազնիվ ընկերակցությունն ու դաշնակցությունը ռուս ժողովրդին եւ Ռուսաստանին:**

**Այսօր առաջնակարգ խնդիր է Հայաստանի իշխանությունների, հայ աշխարհիկ եւ հոգեւոր բոլոր կառույցների համար՝ վերցնել հստակ նոր կուրս ռուսական պետության հետ բոլոր տիպի հարաբերությունները էլ ավելի լավացնելու եւ նոր ռելսերի վրա դնելու, հիշեցնելով նրանց ոչ հեռու անցյալի պատմության դասերը:**

**Հայ ժողովրդի համար Եվրոպան արդեն ապացուցել է իր ինչ լինելը: Նրան լիովին վստահելու իրավունք հայ ժողովուրդը պարզապես չունի:**

**Հայաստանի բնակչության արտագաղթը գոնե նվազեցնելու եւ հայրենիքը վտանգից փրկելու համար առաջարկում եմ հետեւյալը.**

**Կարճ ժամանակում վերնագրյալ կառույցները միաբան մշակեն ծրագիր եւ ստեղծեն կազմակերպություն՝ Հայաստանում ֆիզիկապես ներկա ընտանիքներին հավասարաչափ ամենամսյա նպաստ հասցնելու համար:**

**Միաժամանակ ներգրավվել Հայաստանում ստեղծված հասարակա-քաղաքական մթնոլորտի բարելավմանը, այն է՝ վերացնել ատելությունը երկրում:**

**Ասված մի արասցե, որ Հայաստանում կրկնվի Կիլիկիայի հայկական թագավորության եւ Հռոմեական կայսրության հետ պատահածը՝ շարժառիթ հանդիսացող գործոններով հանդերձ:**

**ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
**Ինժեներ**
**Երեւան**
**Հեռ. (+374) 010 260343**

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սույն թվականի հուլիսի 29-ից հայտարարում է 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության տրամադրման համար մրցույթ: Մրցույթի մասնակցության իրավունք ունեն հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 17-ի N256Ն որոշմամբ հաստատված մրցույթի կանոնների պահանջները բավարարող ընկերությունները (որոշմանը կարելի է ծանոթանալ հանձնաժողովի www.psrc.am կայքում և ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի 2013 թվականի հուլիսի 19-ի N22 տեղակագրում): Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում՝մինչև սույն թվականի օգոստոսի 28-ը՝ քաղաք Երևան, Սարյան 22 հասցեով:

«ԱԶԳ» 23.07.2013թ օրաթերթում տպագրված Երեւան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարման աճուրդը եւ մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովի հայտարարության աճուրդով օտարվող գույքերի ցանկի 12-րդ տողի՝ Ավետիսյան 70 հասցեում գտնվող գույքի աճուրդը համարել չեղյալ:

**Երեւան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարման աճուրդը եւ մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողով**

## ՌԱԿ կենտրոնական գրասենյակը՝ նոր հասցեում

Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակը, որը ցարդ գործում էր Կորյունի 19ա հասցեում, այսուհետեւ կշարունակի գործել Հանրապետություն (նախկին Ալավերդյան) փողոցի 47 շենքի 2-րդ հարկում, հետեւյալ հեռախոսահամարներով.- (374)060-271114, (374)91-566845, (374)77-566845:

Էլ. հասցե՝ ramkavar@gmail.cim

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 29.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: